

ԱՅՓ լրատու գործակալությունը հաղորդեց, որ Երևանի չի շնորհալուրեր Արաբյանի նոր նախագահին՝ Իլիամ Ալիևին ընտրությունը, այսուհանդերձ կր յուսյ գործակալի անոր հետ՝ Լեոնալին Ղարաբաղի տագնապի լուծման համար:

«Սովորություն չունիք շնորհալուրեր փոխանցելու երկու երկիրներում միջև, եւ մենք մտադիր չենք շնորհալուրելու Իլիամ Ալիևին՝ այս յաղթանակին առիթով», յայտարարած է Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանյանը: Լրագրողներու հետ հանդիպումի մը ընթացքին, Օսկանյան ընդգծած է, թէ Երևան պիտի գործակցի տրոստիկ նախագահին հետ՝ Լեոնալին Ղարաբաղի տագնապի լուծման ուղղութեամբ եւ յոյս յայտնած է, թէ Իլիամ կը յաջողի շարունակել բանակցային գործընթացը:

Օսկանյան մտահոգութիւն յայտնած է Արաբյանի մէջ իշխանութիւնը Հայտար Ալիևին իր որդիին՝ Իլիամին փոխանցման մասին շուրջ: «Մենք մտնէն կր հետեւիք Արաբյանի մէջ պարզապէս ընտրուելուն, որովհետեւ Հայաստան կարիքը ունի ներքին կայունութիւն ունեցող գործակիցներու», նկատել տուած է Օսկանյանը:

## ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԽՍՏԻԻ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵ ՍՈՒՐԻՈՅ ԳԷՄ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՔՈՆԿՐԵՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Նախագահ զօր. Էմիլ Լահուտ երէկ հրապարակեց հաղորդագրութիւն մը, յայտարարելով, որ Սուրիան հաշուետուութեան կանչելու ամերիկեան Քոնկրէսին որդեգրած օրէնքը կ'ապացուցէ ամերիկեան կողմնակալութիւնը ի նպաստ իրաջանեան շահերուն, ինչպէս նաեւ Ուաշինկթոնի երկու չափ-երկու կշիռի քաղաքականութիւնը: Նախագահը ըստ, որ եթէ չըջանին մէջ հաշուետուութեան կանչելու հարց մը գոյուցելու ունի, ապա շատ աւելի յարմար կ'ըլլայ եթէ Իսրայէլը հաշուետուութեան ենթարկուի, որպէսզի ան ներկայացնէ իր բռնարարքներուն եւ սպանդներուն մասին բացատրութիւններ:

Նախագահ Լահուտ կոչ ուղղեց Միացեալ Նահանգներուն՝ իրենք գիրքեր փրկելու սիրնական լուսինկէն, որովհետեւ անիկա լուրջ վտանգներու դուռ կը բանայ ամերիկացի ժողովուրդին համար: Սիրնականները Մ.Նահանգները կը մղեն որդեգրելու ծայրայեղական քաղաքականութիւն, որմէ միակ օգտուողը կ'ըլլայ Թէյ Աւի:

Նախագահ Լահուտ շեշտեց, որ չըջանին խաղաղութիւն ապահովելու միակ լուծումը եւ ամէնէն դիրքին միջոցը կ'ըլլայ Իսրայէլի նահանջը արաբական բռնադատուած հողերէն, մինչ այլ անտրամաբանական պիտի ըլլայ չըջանի ժողովուրդներէն եւ պետութիւններէն պահանջել, որ չըջանան, ինչպէս նաեւ անընդունելի պիտի ըլլայ գանձեր անարեւելիներ որակելը, որովհետեւ անոնք պարզապէս ազատագրական պայքար կը մղեն բռնազրուողին դէմ:

## ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ՏԵՍԱԿՑԵՑԱԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏԻ ՀԵՏ



Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ Պապատայի մէջ տեսակցութիւն մը ունեցաւ նախագահ զօր. Էմիլ Լահուտի հետ: Քննարկուեցան տեղական, չըջանային եւ միջազգային հարցեր՝ նորագոյն զարգացումներուն լոյսին տակ, ինչպէս նաեւ նախարարութեան վերաբերող խնդիրներ:

## Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵ ՍՈՒՐԻԱՆ ՀԱՇՈՒՅՏՈՒՌԻԹԵԱՆ ԵՆԹԱՐԿՈՂ ՕՐԷՆՔԸ

Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն երէկ հրապարակուած յայտարարութեամբ մը դատաւարտեց ամերիկեան Ներկայացուցիչներու Տան կողմէ վաւերացումը Սուրիան հաշուետուութեան ենթարկող օրէնքին, որ կ'ամբարտնաջանի փոխանակ յոպիին կողմէ շղթայափոխուած թշնամական քաղաքականութիւնը ընդհանրապէս արաբներուն եւ մասնաւորաբար Սուրիոյ դէմ:

Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն նկատել տուաւ, որ Սուրիոյ դէմ այս արշաւին նպատակն է չլստել անոր տոկունութիւնը եւ տկարացնել արաբական իրաւունքներէն անկողնող Գամալիսի վճռականութիւնը: Այդ արշաւը նաեւ կը վտանգէ ամբողջ շրջանը եւ կը խոչընդոտէ խաղաղութեան գործընթացը, առաջին հերթին ծառայելով սիրնական թշնամիին շահերուն:

Նշելով, որ շրջանին մէջ լայնածիր պայթումի մը վտանգները կ'աւելնան, Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն կը շեշտէ արաբական իրական միասնականութեան մը եւ ներքին իրաւունքներու կեցուածքին անարապիտան անհրաժեշտութիւնը՝ արաբական աշխարհին, Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի ուղղուած սպառնալիքներուն դէմ:

Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն արաբական աշխարհէն պահանջեց կանգնի Սուրիոյ եւ անոր ղեկավարութեան կողքին, որովհետեւ Սուրիոյ ուղղուած որդեգրուած, ուղղուած է արաբական շահերու պաշտպանութեան:

## ՍԱԼԵՉԻՈՅ ՄԷՋ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՎԵՂՍԺՈՂՈՎԻՆ ԸՆԹԱՅԲԻՆ ՎԱՐՉԱՊԵՏ ԸԱՐԻՐԻ ԻՐ ԽՕՍԲԻՆ ՄԷՋ ՇԵՇՏԵՑ Ի ՆՊԱՍ ԻՍՐԱՅԷԼԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ Մալեգիոյ մէջ իսլամական վեհաժողովին ընթացքին իր արտասանած խօսքին մէջ նկատել տուաւ, որ Սուրիան հաշուետուութեան կանչելու օրէնքը, որ վաւերացուած է Միացեալ Նահանգներու Քոնկրէսին կողմէ, ցոյց կու տայ ամերիկեան Քոնկրէսին կողմնակալութիւնը ի նպաստ իսրայէլի եւ արաբներուն ու արաբական իրաւունքներուն նկատմամբ կը ցուցաբերէ ամերիկեան անտարբերութիւն:

Վարչապետ Հարիրի աւելցուց նաեւ, որ Միջին Արեւելքը ներկայիս գերի ղարձած է հիմնական երեք խնդիրներու՝ պաղեստինեան տագնապ, Իրաքի տագնապ եւ անարեւելիութեան դէմ պատերազմ:

Ան դիտել տուաւ, որ չըջանին մէջ խաղաղութեան հաստատման համար միակ լուծումը միջազգային օրէնքներուն ու ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի բանաձեւերը եւ որոշումները գործադրելուն է:

Երէն է, ինչպէս նաեւ վերագառնալ խաղաղութեան բանակցութիւններուն:

Վարչապետ Հարիրի կոչ ուղղեց ՄԱԿին եւ միջազգային ընտանիքին իր պատասխանատուութիւնները յարգելու Իսրայէլի պարտադրելու միջոցով իր խօսքին մէջ նաեւ խստիկ դատաւարտեց Սուրիոյ դէմ կատարուած իսրայէլեան ուժերու ծնունդները, նկատել տալով, որ նման բռնարարքներ կը խախտեն միջազգային օրէնքը:

Միւս կողմէ, վարչապետ Հարիրի վեհաժողովին գուշակեց հանդիպումներ ունեցաւ բարձրաստիճան անձնակազմի ղեկավարներու հետ: Վարչապետը այցելեց Ռուսիոյ նախագահ Ալեքսանտր Մեդվեժեւի:



Փութինի, որ իրրեւ հիւր կը մասնակցի վեհաժողովին: Քննարկուեցան չըջանային նորագոյն իրադարձութիւնները:

Վարչապետ Հարիրի հանդիպումներ ունեցաւ նաեւ Փաքիստանի նախագահ Փերվիզ Մուշարրաֆի, Թուրքիոյ նախագահ Ահմէթ Նեճմէթ Սեզէրի, Իրանի նախագահ Մոհամադ Մախթեմի եւ Մալեգիոյ վարչապետ Մահմաթ Մոհամադի հետ:

## ՇԱՐՈՆ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ ՅՈՒՈՐՏԱԼ ՍՈՒՐԻՈՅ ԳԷՄ

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն յայտնած է, թէ Սուրիոյ դէմ գինուորական նոր գործողութիւն մը կարելի է, յայտարարելով. «Բնաւ նախօրօք պիտի չյայտարարենք, թէ պիտի յարձակինք թէ ոչ»:

Հոկտեմբեր 5-ին, իսրայէլեան ռազմական օդանաւեր ռմբակոծած էին Դամասկոսի մօտակայ մարզումի կեդրոն մը, որ ըստ Իսրայէլի, կ'օգտագործուէր իսլամական ժիհադ խմբակի կողմէ:


Անիկա Իսրայէլի կողմէ 30 տարուան մէջ օդային առաջին յարձակումն էր սուրիական հողամասերու վրայ:

Ըստ Շարոնի, յարձակումը «ճիշդ քայլ» եղած է: «Անիկա մեծ վնաս չպատճառեց, սակայն սուրիացիներուն սորվեցուց, որ չեն կրնար Իսրայէլի դէմ գործել եւ չեն կրնար իրանցիներուն օգնել», ըսած է ան «Ճեղքուղի» թերթին մէջ լոյս տեսած հարցազրոյցի մը մէջ:

Շարոնի գրասենեակին բարձրաստիճան մէջ պաշտօնատարը յայտնած է, որ Իսրայէլ հիւսիսային ճակատին վրայ՝ Լիբանանի եւ Սուրիոյ հետ սահմանին երկայնքին ուժերու ամրապնդում չէ կատարած, «ինչպէս նաեւ սուրիական կողմէն որեւէ փոփոխութիւն չենք նկատած»:

Սուրիական բանակին սպայակոյտի պետը՝ զօրավար Հասան Թուրքմանի իր կարգին իր ուժերուն կոչ ուղղած էր «հակադարձելու պատրաստ ըլլալ» իսրայէլեան որեւէ յարձակումի պարագային:

## ՇՆՈՒՏԱ Գ., ՉԱԳԳԱ Ա. ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐ ԵՒ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ՝ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏԻ ՄՕՏ



Երէկ առաւօտ, 17 Հոկտեմբեր 2003-ին, երեք հոգեւոր պետերը՝ Ն. Ս. Շնուտա Գ., Ն. Ս. Չապա Ա. պատրիարքներ եւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. կաթողիկոս այցելութիւն մը տուին հանրապետութեան նախագահ զօր. Էմիլ Լահուտի, Պապատայի նախագահական ապարանքին մէջ:

Ինչպէս ծանօթ է, երեք հոգեւոր պետերը միջ-եկեղեցական կարեւոր հանդիպում մը կ'ունենան Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան մայրավանքին մէջ, Անթիլիաս, հրաւիրուելով Արամ Ա. վեհափառին: Տարին անգամ մը գումարուող այս համագումարը Հերթաբար տեղի կ'ունենայ Գահիրէի, Դամասկոսի եւ Անթիլիասի մայրավանքին մէջ:

Արամ Ա. կաթողիկոս նախագահ Լահուտին ընդհանուր գիծերով ներկայացուց համագումարին օրակարգը, շեշտեց քրիստոնէական միութեան, քրիստոնեայ - իսլամ գործակցութեան անհրաժեշտութիւնը, ինչպէս նաեւ երեք եկեղեցիներու յանձնառուութիւնը արդարութեան վրայ հիմնուած խաղաղութեան Միջին Արեւելքի մէջ:

Նոյնպէս, Շնուտա եւ Չապա պատրիարքները իրենց կարգին, ընդգծեցին քրիստոնեայ-իսլամ գոյակցութիւնը աւելի ամրապնդելու անհրաժեշտութիւնը եւ իրենց գորակցութիւնը յայտնեցին նախագահ Լահուտի աշխատանքներուն:

## ԵԱՅԿԻ ԴԵՏԵՐՈՒ ԽՄԲԱԿԻ ԴԵԿԱԿԱՐ ՓԻԹԸՐ ԱՅԲԵՐ ԽՈՇՏԱՆԳՈՒԱԾ՝ ՊԱՔՈՒԻ ՄԷՋ

15 Հոկտեմբերին կայացած Ազգայնականի նախագահական ընտրութիւններու արդիւնքներու հրապարակումէն ետք ծայր տուած անարգութիւններու եւ ընդդիմադիրներ - ապահովական ուժեր բախումներուն ընթացքին Պաքուի մէջ խոշտանգուած է նաեւ ընտրութիւններուն հետեւած ԵԱՀԿի դէմքեր խմբակի ղեկավար Փիթըր Այքեր: Այքերի ոստիկաններ խոշտանգած են զայն՝ բազմաթիւ լրագրողներու ներկայութեան, ընդդիմադիր «Սուսաւաթ» կուսակցութեան գրասենեակին առջեւ:

Մեկնաբանելով միջադէպը, Այքերի պաշտօնակից Լեւ Գրոզդեցկա յայտարարած է, թէ շատ «ցնցուած է» իր տեսածին: «Դէպքը սարքուած էր յատուկ ուժերու խումբի մը կողմէ, որուն կ'աջակցէին ոստիկանները: Ցուցարարները խաղաղ վիճակի մէջ էին: Այն տպաւորութիւնը կը ստեղծուի, որ իշխանութիւնները կը պայքարին իրենց սեփական ժողովուրդին դէմ», յայտնած է Լեւ Գէտը: «Թուրան» լրատու գործակալութեան:

## ՄԻՋԱԶԱՅԻՆ ԿԵՑՈՒԱԾԵԼԵՐ

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան բանբեր Ատամ Էրեյի երէկ յայտարարեց, թէ Միացեալ Նահանգներ կը բաժնեն ԵԱՀԿի այն կարծիքը, թէ Ազգայնականի նախագահական ընտրութիւնները չեն համապատասխաներ միջազգային չափանիշներուն: Ըստ էրեյի, ամերիկացի դէտեր Ազգայնականի Շարը՝ էջ 2

## ԱԿԱՐԿ

## ԱԶՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ՆՈՐՄ ԵՐՈՒՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ

Այն ինչ որ պատահեցաւ անցնող երկու օրերուն Պաքուի փողոցներուն մէջ՝ Արաբյանի նախագահական ընտրութիւններուն առիթով աննախատեսելի չէր. ընդհակառակն, թերեւս ալ հարապատ արտացոլանքն էր պարզապէս անսովոր խոստանալարական հասարակարգի գործելաձեւին:

Ընտրակէղծիքներով, բռնարարքներով, քաղաքացիական անհնապահութեամբ եւ անկարգութեամբ յատկանշուող պարզապէս անկարգութեամբ ընտրութիւններուն արդիւնքը յանգեցաւ եւրոպական յանձնաժողովի նախագահի մը բռնակցի օրինակաւ բռնապետի մը նախագահ ընտրութեան: Մինչ, Պաքուի փողոցները կ'եռային մուսաւաթականներու եւ Ալիեւական իշխանութեան օրինակաւ ներկայացուցիչներուն միջև պարզապէս անկարգութեամբ ընդհարումներով: Միջազգային լրատուամիջոցներու դիմաց օր ցերեկով կատարուող ներապարզապէս այս ծեծուղտուրներէն բաժին հասաւ նոյնիսկ ԵԱՀԿի դիտորդական առաքելութեան ղեկավար Փիթըր Այքերին, որուն անուան ծանօթ են մեր ընթերցողները, Հայաստանի նախագահական ընտրութիւններու օրերին: Իրաւապահ մարմիններու յատուկ ջոկատի կազմակերպած եւ պարզապէս անսովոր խոստանալարական ընտրութիւններու օրինակաւ անարարքը իր լրումին հասցուց նախագահական ընտրութիւնները պարզապէս անսովոր խոստանալարական չափանիշներուն համապատասխանեցնելու երկրի իշխանութեան թափած ճիգերը:

Երկու տարեկան երեխային սպանութեան մինչեւ Այքերի ծեծը, անցնելով Պաքուի փողոցներուն վրայ զգետնուածներու երեւոյթէն, եկան կապուելու տուեալներու ամբողջութիւնը, որ կը յատկանշէ պարզապէս անսովոր ժողովրդավար հասարակարգը կերտելու գործընթացը:

Համաշխարհային լրատու գործակալութիւնները, ցուցադրելով խուլիկանական ընտրութիւններու այս ընթացակարգը, տարբեր մեկնաբանութիւններով վերլուծեցին Ալիեւ ընտանիքի քաղաքական ժառանգութեան փոխանցումի վաստը:

Աւատապետական իշխանափոխութեամբ, մուսաւաթականներու խուլիկանութիւններով եւ օրինապահ մարմիններու շղթայապարծած պայտուի բռնարարքներով բնութագրուեցան Արաբյանի նախագահական ընտրութիւնները: Մէկ խօսքով, ամբողջովին համապատասխան՝ պարզապէս անսովորներուն:

Ահա այն պայմաններուն մէջ ընտրուած նախագահը, կը պատրաստուի լուծել Արաբյանի հակամարտութեան խնդիրը, նախապատուութիւն տալով... խաղաղ միջոցներուն:

### ՀԱՐԱԹԱՅԻՆ ԼԻՔԱՆԱՆԻ ՄԷՋ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՇՔԱԽՈՒՄԻ ՄԸ ԴԷՄ «ՃԱՄԲՈՒ ԱՐԳԵԼՔ»...

Հարաւային Լիբանանի մէջ ծառայող պահակական զորքերը երէկ յայտնեցին, որ Հրապարակի զինեալները Նաբուլայի մօտ փակած են Լիբանանի մէջ ամերիկեան դեսպանատան մէկ պատուիրակութեան շքախումբը: Պատուիրակութեան մաս կը կազմէին դեսպանատան քաղաքական խորհրդատուներ, ինչպէս նաեւ գինեւորական պատասխանատուներ, որոնք «չըջատու» մը կը կատարէին հարաւի մէջ: Պատուիրակութիւնը անմիջապէս կասեցուց «չըջատու» եւ այցելեց հարաւի մէջ Ֆինիլի միջազգային ուժերուն ընդհանուր կեդրոնը, ուր հանդիպում մը ունեցաւ ուժերուն հրամանատար գոր. Լալիթ Թիւրաթիին հետ: Միւս կողմէ, Հրապարակ այս գծով ոչ մէկ մեկնաբանութիւն կատարեց: Իր կարգին, ամերիկեան դեսպանատունը երէկ յայտարարեց, որ հարաւի մէջ ամերիկեան դեսպանատան մէկ պատուիրակութեան արգելուած է որոշ շրջաններ այցելել: «Դեսպանատունը այս իմաստով պաշտօնական բողոք ներկայացուց լիբանանեան պետութեան», ըսաւ ամերիկացի պաշտօնատար մը:

### ՇԱՐՈՆԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԳԵՐԻՆԵՐՈՒ ՓՈՒՍԱՆԱԿՄԱՆ ՀԱՐՅՈՎ

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն «Ճերուզալէմ փոսթ» օրաթերթին հետ ունեցած իր հարցազրոյցին ընթացքին անդրադառնալով Հրապարակի հետ գերիններու փոխանակման հաւանականութեան ըսաւ, որ կ'ուզէ իսրայէլացի օդաչու Ռոն Արատը դուրս պահել բանակցութիւններէն: «Ապտիլ Բարիմ Օպտյոն եւ Մուսթաֆա Տիրանի մեր կողմէ ձեռքաւարկուած են եւ Ռոն Արատի մասին տեղեկութիւններ ստանալու համար զանոնք ազատ արձակելը իրարու հետ կապ չունի», ըսաւ Շարոն: Շարոն աւելցուց, որ բարոյական տագնապ մը գոյութիւն ունի նման բանակցութիւններու մէջ, որովհետեւ տարիներու ընթացքին զօրաւոր արշաւներ կազմակերպուած են Ռոն Արատը ազատ արձակելու նպատակով, սակայն նշեալ արշաւը չի կրնար իշխել մեր որոշումներէն: Շարոն աւելցուց, որ Իսրայէլ կը նախընտրէ ազատ արձակել 2000ին Հրապարակի կողմէ գերի բռնուած իսրայէլացի առեւտրական Էլհանան Թանէնպաուսը:

### ԱՍԱՏԷՆ ՀԵՌԱԳԻՐ ՊԸՐՐԻԻ

Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատ երէկ Լիբանանի խորհրդարանի նախագահ Նեպիի Պրըրիի յղեց հեռագրի մը, որուն մէջ վստահեցուց, թէ Սուրիա կը հսկէ Լիբանանի ապահովութեան եւ ամէն գնով նեցուկ կը կանգնի անոր:

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Երեսփոխանական Գրասենեակը մեր յարգոյ ազգայիններուն կը յայտնէ, որ ամէն օր առաւօտեան ժամը 9:00էն կէսօրը ետք ժամը 5:00, իսկ Շաբաթ օրերը առաւօտեան ժամը 9:00էն 1:00, կ'ընդունի դիմումներ զանազան նախարարութիւններու եւ պետական հաստատութիւններու կապուած որեւէ հարցի վերաբերեալ: Այսուհետեւ Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովհաննէս ամէն Չորեքշաբթի, առաւօտեան ժամը 9:00էն 11:00 ներկայ պիտի ըլլայ Երեսփոխանական Գրասենեակ, «Շաղոյեան» կեդրոն, Բ. յարկ, ուր պիտի ընդունի քաղաքացիներուն դիմումները:

Հինգշաբթի, 9 Հոկտեմբեր 2003էն սկսեալ, Կիւսիսի Կեդրոնական վարչութիւնը 15 օրու տեւողութեամբ կ'ընդունի պատական վարչամեթոտայէն դուրս գտնուող անձերու դիմումները հետեւեալ պաշտօններուն համար: Զննչ, խուճիկ ղեկավար, գետնի վրայ դիտարկում կատարող, գրասենեակային ընկեր եւ ընտրու մասնագետ՝ ամբողջ Լիբանանի տարածքին գտնուող շէնքերու եւ հաստատութիւններու մասին ուսումնասիրութիւն մը պատրաստելու շրջագիծին մէջ: Ետաքըրրուողները կը խնդրուի դիմել Կիւսիսի Կեդրոնական Կրթութեան, որ կը գտնուի Քանթարի փողոցի վրայ, Սըրի աշտարակի մօտ, «Առեւտրի եւ Էլեմենտըրի» շէնքին մէջ, հինգերորդ յարկ: Կարելի է դիմել նաեւ Երեսփոխանական Գրասենեակ, Շաղոյեան կեդրոն, Բ. յարկ: ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Հ.Յ.Գ. «ԳՐՈ» ԿՈՄԻՏԵԻ ՔԱՐԱԶՉԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԸ  
**ՎԱՐԴԱՆ ՇԱՏՊԱԶԻ ՇԻՐԱՔԱՐԻ ԲԱՅՈՒՄ**  
● ԸՆԴՈՒՄԵՆԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ  
● ՅԻՇԱՍԱԿԻ ԽՕՍԸ  
Տեղի կ'ունենայ Կիրակի, 26 Հոկտեմբեր 2003, առաւօտեան ժամը 10:30ին, Ֆրըն Շրպալքի Ազգային գերեզմանատան մէջ:  
Ծանօթ. Երբեք չը պահովուած է Արագածի Հ.Յ.Գ. «Գրո» ակումբէն, առաւօտեան ժամը 10:00ին:

### ՍԸՍԱՅԱ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵ ՍՈՒՐԻՈՅ ԴԷՄ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Տեղեկատուութեան նախարար Միշէլ Սըմահ երէկ իր յայտարարութիւններուն մէջ նկատել տուաւ, որ Սուրիան հաշուետուութեան կանչելու ամերիկեան Բոնկրէսին որոշումը խախտում է միջազգային օրէնքին, ինչպէս նաեւ միջամտութիւն՝ լիբանանեան գերիշխանութեան: Սըմահ պատկերասփիւռի «Պի. Պի. Սի.» կայանին հետ ունեցած հարցազրոյցին ընթացքին դատաւարտեց Միացեալ Նահանգները՝ աշխարհը պայթելի վայրի մը վերածելու յանցանքով: Սըմահ շեշտեց, որ նշեալ օրէնքը ոչ մէկ ազդեցութիւն ունի լիբանանեան պետական յարաբերութեանց կամ Թաէֆի համաձայնագրին վրայ:

### ԻՍԼԱՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵ ՍՈՒՐԻՈՅ ԴԷՄ ՔՈՆԿՐԵՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Իսլամական պետութիւնները երէկ դատաւարտած են Սուրիոյ դէմ պատժամիջոցներ հաստատելու ամերիկեան քայլերը, յայտնելով, որ ասիկա Իսրայէլը պիտի քաջալերէ «չարունակելու իր յարձակումները»: Իսլամական խորհրդատուութիւնը կազմակերպութեան 57 անդամները Մայիսի մէջ գումարուած համագումարին բնած յայտարարութեան մէջ վերահաստատած են Սուրիոյ հանդէպ իրենց զօրակցութիւնը եւ դատաւարտած՝ ամերիկեան Բոնկրէսին որոշումը: Անոնք նաեւ կոչ ուղղած են Մ. Նահանգներու, որ «չինչի տիպի կ'փոխարքած յարձակումը քաղաքականութիւն մը որդեգրեն» իբրեւ հիմ ազգերու եւ ժողովուրդներու միջեւ հասկացողութեան: Ներկայացուցիչներու Տունը Չորեքշաբթի օր 4ի դէմ 398 քուէներով որոշած էր պատժամիջոցներու դիմել Սուրիոյ դէմ՝ ահաբեկչական խմբակներու հետ անոր ենթադրեալ կապերուն պատճառով:

### ԿԻՊՐՈՍԻ ՀԱՐՅՈՎ

### ԷՐՏՈՂԱՆ ԿԸ ՅՈՒՍԱՅ ՅԱՌԱՋԻՍՈՒԹԻՒՆ ԱՐՉԱՆԱԳՐԵԼ

ՊՐԻԻՔՍԷԼ, 17 (ԱՅՓ). — Թուրքիոյ վարչապետ Ռեճիփ Թայիփ Էրտողան Ուրբաթ օր յոյս յայտնած է, որ Կիպրոսի հիւսիսային բաժնին մէջ Դեկտեմբերին կայանալիք ընտրութիւններէն ետք յառաջդիմութիւն կրնայ արձանագրուիլ Կիպրոսի 29 տարուան բաժանումին լուծման գծով: Ան կը խօսէր Պրիքսէլի մէջ, ուր երկօրեայ վեհաժողովի մը ընթացքին է: Միութեան ղեկավարներուն հետ հանդիպումներ ունեցած է: Դեկտեմբեր 14ի ընտրութիւնները տեղի պիտի ունենան Կիպրոսի հարաւային միջազգային ճանաչուած ունեցող բաժնին եւ Միութեան անդամակցութեան նուազ քան 5 միս առաջ: Ե. Միութիւնը ըսած է, որ Կիպրոսի միայն յունական բաժնի պիտի ընդունի (Մայիս 2004ին), եթէ մինչ այդ կողմի վերամիացած չըլլայ:

### ԿՈՉ

Սրտի անհուն գոհունակութեամբ, կը տեղեկացնենք Հայաստանեայց առաքելական Ս. Եկեղեցւոյ Լիբանանի թեմի Կիրակոսեայ Դպրոցներու բացումը, Կիրակի, 19 Հոկտեմբեր 2003ին, որ գաղութիս հայկական վարժարաններու կողքին օտար այս ասիական հայ մանկան մտքին ու հոգիին մէջ կը դրոշմէ լուսաւորչաւանդ, մտաբարձունք եւ վարդապետութիւն հայ հաւատքի, լեզուի եւ ազգային ոգիի տարրերը: Այսօր նոր ժամանակներու սեմին յառաջդէմ աշխարհը կը դիմակալէ նոր մարտակոչեր, որոնք առ երեւոյթ կրնան տարբեր թուիլ, սակայն էութեամբ կը մնան նոյնը՝ ինչպէ՛ս մեր մանուկները հեռացնել Աստուծոյ սէրէն եւ մեր հայադրոշմ ինքնութենէն: Ոչ մէկ կասկած, որ կիւսիսեայ վարժարաններու ցանց սերմերը կ'ստանան, այսուհանդերձ խորապէս կը հաւատանք, որ մեր մատուցած մանուկները հասակ առնելով պարագայի իրենց յաջողութեանց բարձունքները պիտի անդրադառնան, որ կիրակոսեայ վարժարանը իրենց քրիստոնսաշունչ հաւատքի, հայեցի ինքնութեան եւ գիտակցութեան վրայ անուրաքանչեւ կ'ընթացնէ: Սիրելի՛ ծնողներ, Կիրակոսեայ վարժարանը իր գիրկը բաց կը պահէ իւրաքանչիւր հայորդիի, որպէսզի սնուցանէ հայ հաւատքի ու պատմութեան կաթով, հիմերը դնելով մանուկ հոգիներուն մէջ մեր ազգի ապագայ ղեկավարներուն: Մի՛ գրկէք ձեր գաւակները ազգաշէն այս սիրուն բոյնէն:

Կիրակոսեայ վարժարանը իր գիրկը բաց կը պահէ իւրաքանչիւր հայորդիի, որպէսզի սնուցանէ հայ հաւատքի ու պատմութեան կաթով, հիմերը դնելով մանուկ հոգիներուն մէջ մեր ազգի ապագայ ղեկավարներուն: Մի՛ գրկէք ձեր գաւակները ազգաշէն այս սիրուն բոյնէն:

ԼՕՒԻ «ՆԱՅԻՐԻ» ՄԱՍՆԱԳԻՒ ԱՆԹԻԼԻԱՍ  
**ԸՆԿԵՐԱՅԻՆ Ա. ՀԱՆԴԻՊՈՒՄ**  
ՊՏՈՒՂՆԵՐՈՎ ԵՒ ԲԱՆՋԱՐԵՂԵՆՆԵՐՈՎ  
ՉԱՐԿԱՐԱՆՔՆԵՐ  
Կը ներկայացնէ  
**ՇԵՖ ՉԱՐՄԻԿ ՀԱՆԱՃԵԱՆ**  
Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 21 Հոկտեմբեր 2003, առաւօտեան ժամը 10:00ին, ԱՐՔԱԼԵԱՆՇ. Ս. Ը. Ս. Մարգարեան ակումբային համալիրին մէջ:  
ԾԱՆՕԹ. Երբեք չը պահովուած է՝ Անթիլիպի «Սիմիթեան» շէնքերու մուտքէն, առաւօտեան ժամը 9:45ին: ԿԱՐՉՈՒԹԻՒՆ

### ՊԻԵԼՈՌՈՒՄԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեան երէկ ընդունեց Պիելոուսիոյ արտաքին գործոց նախարար Սերգէյ Մարտինովը: Հանդիպման ընթացքին քննարկուեցան երկու երկիրներուն միջեւ առեւտրատնտեսական համագործակցութեան հեռանկարներն ու երկկողմանի յարաբերութիւններուն վերաբերող հարցեր: Ընդգծելով, որ վերջին տարիներուն Հայաստանի եւ Պիելոուսիոյ միջեւ առեւտրի ծաւալը զգալի աճ արձանագրած է, կողմերը իբրեւ երկու երկիրներու փոխաշահաւէտ տնտեսական գործակցութեան մարպեր նշած են քարձք արեւտագիտութիւնը եւ գիւղատնտեսութիւնը: Նախագահ Քոչարեան վստահութիւն յայտնած է, թէ Պիելոուսիոյ արտաքին գործոց նախարարին Հայաստան այցելութիւնը իրան պիտի հանդիսանայ գործակցութեան վարձագան: Սերգէյ Մարտինով Երեւանի մէջ նաեւ տեսակցութիւն մը ունեցաւ իր հայ պաշտօնակիցին՝ Վարդան Օսկանեանի եւ Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Արթուր Պաղտասարեանի հետ:

### ԵԱՅԿԻ ԴԵՏԵՐՈՒ ԽՄՐԱԿԻ ԴԵԿՎԱՐ ՓԻԹԸՐ ԱՅՔԵՐ ԽՈՇՏԱՆԳՈՒԱԾ...

Շարունակուած Ա. Էջէն Զանձնաժողովի տուեալներուն համաձայն ամբողջովին կեղծուած են պետական մարմիններուն կողմէ: ԻՐԱԿԻԱԿԸ ԿԸ ՄԱՅ ԱՐՈՒԱԾ Հինգշաբթի օրուան բուռն բախումներէն ետք, Պաքոսի մէջ իրավիճակը երէկ կը մնար յարաբերաբար խաղաղ, մինչ ընդդիմադիր ղեկավարներ ձերբակալման սպառնալիքներ կը ստանային: Պաքոսի փողոցներուն մէջ երէկ կը տեսնուէին մեծաթիւ ոստիկաններ, բանակային միաւորներ, յատուկ ուժեր: Սիւս հսկողութեան տակ առնուած են կառավարական կեդրոնները: Ազգային ճանի ներքին գործոց նախարար Ռամիլ Ուսուկով յայտարարեց, թէ կարգն ու կանոնը պիտի պահպանուի եւ օրինազանցները դատական հետապնդումի պիտի են: Ընտրութիւններէն ետք ծայր տուած բախումներուն ընթացքին ձերբակալուած են 196 ցուցարարներ, վիրաւորուած են 64 ոստիկաններ, որոնց 34ը հիւանդանոց փոխադրուած է: Վիրաւորուած են նաեւ 20 ցուցարարներ, ինչպէս նաեւ սպանուած տապալուածի պիտի են: 51 անհայ ազգերի մը:

### «ԱՉԳԱԿ»Ի ՖՈՆԵՏԻՆ

Սիիրան Պալըգձեանի մահուան քառասունօրին առիթով, Տեր եւ տիկին Ռաֆայէլ Սերոբեան եւ զաւակուց 50,000 Լ. Ռ. Տեր եւ տիկին Սեւակ Սերոբեան եւ զաւակուց 25,000 Լ. Ռ.

**ԱՅՀԻԼ AFHIL**  
**ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՄԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ**  
AT HOME  
• Wheelchair  
• Walker  
• Electric Bed  
• Manual Bed  
• Water Mattress  
• Cans  
• Sticks  
• Serum Tripod  
• Walking Frame  
RENT AND SALE  
HOME MEDICAL EQUIPMENT SERVICES  
• Over Bed Table  
• All Kinds Of Oxygen  
We Also Provide  
• Laboratory service,  
• Physiotherapist  
• Nurses Aids  
• P.T.S. (AMBULANCE)  
ԶՈՒՑԱՍՐԱԸ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՅԸՐ ԳՐԱՍԵՆԱԿ՝ ԱՅՀԻԼ, ԱՅԵՏԻ ՇԵՆԸ, Բ. ՅԱՐԿ (ԵՆԱ 001) 242553/7  
NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.  
ԾԱԽՈՒ ԽԱՆՈՒԹ



# ԿԸ ՄՆԱՄ ԱՆՄԱՏ

Նարեկացին Սուրբ Հռչակուած է հայ ժողովուրդին կողմէ: Անկասկած մեր ժողովուրդը, մեր եկեղեցին հիմնաւոր պատճառներ ունէր Նարեկացին դասելու համար ի տուրբերուն կարգին: Հազար տարիէ վեր հայ հաւատացեալ մարդը կ'որթէ Նարեկով, կ'աղօթէ Նարեկացիին ձայնով ու բառերով: Այսօր ալ վստահ ենք, որ բազմաթիւ հաւատացեալներու տուններուն մէջ սնարի գիրք կամ բարձի տակ պահուած թանկագին աղօթատետրեր կ'աղօթեն Նարեկացիին երկնքի անասման կապուտին վրայէն իրեն յայտնուող անհամար տեսիլներուն մէջ բնաւ կրցած էր արդեօք տեսնել նշան մը այն մասին, թէ ինք օր մը սուրբ պիտի Հռչակուէր իր ժողովուրդին կողմէ: Կը կարծենք, որ տեսած էր:

Բայց զինք Սուրբ Հռչակող ժողովուրդի մը համար իսկապէս ցնցիչ է անդրադառնալ, թէ ինքզինք որքան անսուրբ կը նկատէր Գրիգոր Նարեկացիին: Ինքն իր անձին հանդէպ Նարեկացիին ունեցած ժխտական պատկերացումը չի՞ խոցեր հայ ժողովուրդին սիրտը: Կրնա՞նք ընդունիլ, որ Նարեկացիին նման մէկը, Աստուծոյ հաճոյ թուելու, անցեալի մարգարէներուն հրահանգները գործադրելու համար այս աստիճան նուաստացնէ ինքզինք եւ իր ընթերցողներուն աչքերէն թաքցնէ այն բարեմասնութիւններն ու գովելի յատկութիւնները, զորոնք ունէր ինք: Ասիկա ալ հարցում մըն է, որուն դժուար է պատասխանել: Բայց արդէն հասած ենք Մատենանի վերջին քան-երեսուն էջերուն եւ հոն կը տեսնենք, թէ ոչինչ փոխուած է:

Ան բարդուեցան ու կուտակուեցան կեանքի տարիներն ընդունայն ու փուռ, Բանգի այն օրէն, երբ մօրս արգանդի Անդաստուտէն ես լոյս աշխարհ եկայ, Ընծիւղուած որպէս մեղքի դժնիկ փուշ, եղայ անպիտան:

Բայց դու մի՛ ըլլար զիս խոցող խալթոց, Ինչպէս երբեմն եղար Յուդայի տոմսից, Կամ Եփրեմի սերունդից: Երբ որ բարեւերմ ցորենի տեղ՝ միշտ Անցեղոցի հոգիիս մէջ տնկուած Ընդարմացուցիչ ինքնաթոյն խոտեր, Ինչպէս չկոչեմ անձս իմ գարշելի Ու անիծաբեր անդաստան, խեղդուած մեղքի փուշերով:

Հազար անգամ Բաւ Լիցի պիտի ըսէինք, եթէ Նարեկացի այս խոստովանութիւնները ընէր մեզի, եւ ո՛չ թէ Աստուծոյ: Նարեկացիին ինք ալ կը խոստովանի, որ իր կեանքի տարիները բարդուել են իրարու վրայ ու կուտակուել են: Կը նշանակէ, որ երիտասարդ չէ, երբ կը զրէ վերի տողերը: Թերեւս ալ մօտեցած է նաեւ Մատենանի գրառումի վերջաւորութեան, սա սքանչելի գիրքին վերջին էջերուն: Բայց Նարեկացիին որքան համեստ պէտք է ըլլայ, որ այս հանգրուանին վրայ կարենայ ըսել, թէ իր կեանքի տարիները անցած են պարագայ ու անպտուղ, եւ ինք մօրը արգանդէն դուրս եկած օրէն ի վեր եղած է անպիտան մարդ:

Այնուհանդերձ պիտի ըսենք, որ մեր հայ քրիստոնեայ ժողովուրդին անձնաթիւն չէ մեղապարտութեան այս զգացումն ու խոստովանութիւնը: Ամէն կիրակի Ս. պատարագի առընթեր մենք չենք, որ մեր ունեցած ու չունեցած մեղքերը կը խոստովանինք «Վա՛յ ինձ, վա՛յ ինձ» գոչելով ու աւելցնելով. «Ո՛ր մէկն ըսեմ, ո՛ր մէկը խոստովանիմ»: Կարծես ընդունուած օրէնք է, որ մենք, Աստուծոյ հաճոյ թուելու համար, մեր մեղքերուն հետ միասին ստանձնենք նաեւ չգործածուած ինչ-ինչ մեղքերու ծանրութիւնը:

Այս հոգեբանութեամբ է, որ արդէն Նարեկացիին գրի կ'անէ իր «Մատենանի Ողբերգութեան»ը, այս թանկագին գիրքը, զոր Աստուծոյ պիտի հրամանէ որպէս «անարեւն գոհարբութիւն»: Այս պատկերացումն ալ ուշագրաւ է բաւականաչափ. Ընդունէ հիւսուածքն այս աղիողորմ հեծեծաճընքերու եւ այս բանական նուէրն հոտոտէ Որպէս անարիւն գոհարբութիւն: Օրհնութեամբ սրբէ ու մարքէ իւրաքանչիւր Տառ մատենանի այս ողբերգութեան: Վաւերացու՛, հաստատէ՛, կնքէ՛ Ձայն որպէս արձան յաւիտեական՝ Ընտիր ու հաճոյ գործերու կարգին:

Նարեկացի այս տողերով է, որ Աստուծոյ սուրբ սեղանին վրայ կը զնէ իր «Մատենան»ը, որ տանարին մէջ այնուհետեւ պիտի խնկարկէ Աստուծոյ անունը: Վերի տողերէն անմիջապէս վերջ Նարեկացիին կը մաղթէ, որ այս գիրքը յաւերժօրէն պահպանուի Աստուծոյ գանձարանին մէջ, հասնի բոլոր ժողովուրդներուն, քարոզութիւն դառնայ բոլորին համար: Հոն է, որ յանկարծ Նարեկացի կը զրէ անկակալը, ամէնէն անսպասելին, այն, ինչ որ իր գրիչէն շատ քիչ անգամ դուրս եկած է:

Թող որ այս գիրքը հասնի ազգերուն, ժողովուրդներուն քարոզուի ի լուր, Տպուի դոներուն բանակներուն, եւ զգայութեան սեմերու վրայ դրոշմուի ամուր: Ու թեպէտ որպէս մահկանացու մը

պիտի վախճանիմ, Բայց այս մատենանի յարակալութեամբ Կը մնամ անմահ:

Նարեկացի թերեւս ո՛չ մը տեղ կամ շատ քիչ անգամ այս իմաստով անմահութեան բաժին մը հանած է իրեն: Ինք ալ վերջապէս զգացած է ուրեմն, որ Մատենան պիտի կատարէ նախաինամական դեր:

Ռ. ՀԱՍՏԵՃԵԱՆ

# ՆԱՐԵԿԱՑԻԻ ԿԸ ՓՈՒՅՆԷ՛ ԿՆՅՈՒ ՀՈԳԻՆ...

Կրթական վերամուտի այս օրերուն բոլորիս մտահոգութիւնը մեր դպրոցներուն ծաղկումն է: Հայ ազգային վարժարաններու մանկապարտէզներուն ձեռնարկը դառնալու իրողութիւնը արդէն ունեցաւ իր որոշ ազդեցութիւնը գաղութիւն, եւ մանաւանդ՝ ծնողներուն հոգեբանութեան վրայ:

Կ'իմանանք, թէ թիւի գրգռի յաւելում արձանագրուած է ազգային վարժարաններուն մէջ: Ուրախալի իրողութիւն է ասիկա: Մեր գաւակները կը վերադառնան հարազատ «փարակ»: Այս կը նշանակէ նաեւ, որ հայ ծնողները ունեցած են կՈՊՁին համաձայն ինքնագիտակցութիւն, նոյնպէս՝ իմացական ու հոգեկան պարթոնք: Միւս կողմէ, սակայն, «հարուստեան» դասակարգը մնաց անտարբեր՝ արձակուած բոլոր կանչներուն նկատմամբ, փակեց ականջները, չլսեց մեր արմատներուն կատշած մնալու հրաւերը, ու իր նիւթական եւ բարոյական գանձերը յանձնեց օտարին: Այս դասակարգին կը պատկանի նաեւ բարեկամութիւնը ընտանիքը:

Այցելութեան մը առիթով, երբ հարցուցի իրեն՝ թոռնիկդ դպրոց արձանագրեցի՞ք: - Այո՛, պատասխանեց եւ աւելցուց, արձանագրեցի բոլորին մօտիկ դպրոց մը, մանկամտուր: Անունը չեմ յիշեր դպրոցին, տեսակ մը անուն է:

- Ինչո՞ւ հայկական դպրոց չդրեք. դու ըստ գաւակներդ ազգային վարժարան ուղարկած էիր, յաջողութեամբ ստանալով իրենց պետական վկայականները: Ինչո՞ւ այս շեղումը՝ յանկարծ... Բարեկամ մտաւ հիստորիայի ակնարկէս ու պատասխանեց.

- Ծիտակը մենք չխառնուեցանք. հարսս չ'ուզեր հայկական դպրոց դրկել: Երբ ակնարկութիւն ըրինք, յորդորեցինք, որ հայկական վարժարան ուղարկեն, մեր տան այնքան մօտիկ հայկական վարժարան մը, մեր ծնեցին: «Մեր գաւակը մենք պիտի կրթենք», ըսաւ հարսս:

- Ձաւակը իսօք չուէ՞ք, կարծիք չունէ՞ք... - Դժբախտաբար՝ ոչ, հիմա կ'իտերուն իսօքը կը քալէ... Ասիկա դուք ինձ մէջ լաւ գիտէք... Դարը փոխուած է եղեր: Մենք մեր ամուսիններուն մէկ իսօքը երկու չէինք ընել: Հիմա՞:

- Հարսդ կը ճանչնամ. համեստ ընտանիքի մը աղջիկն էր: Ուրեմն հարսութիւնը վնասած է անոր... Փոխուած է հոգին, եւ օտարանալու ցանկութիւնը պատիւ կը նկատէ: Ափսո՛ս, որ ազգային վարժարանէ մը շրջանաւարտ եղած է ինք: - Այդ տեսակ բան չեմ կրնար իստիլ իրեն հետ, ապա թէ ոչ մեզ կը զրկէ մեր թոռնիկը համբուրելէ: Մենք տոգտ կը նկատուինք իր աչքերուն: - Ո՞վ կը տանի դպրոց:

- Ամուսինս կը տանի, կէսօրէ ետք հայրը կը բերէ:

- Ափսո՛ս, ձեր դրան դիմաց գտնուող վարժարանը ոտնակոխ ըրած, այդքան հեռաւոր բնակարանէն դուրս ելած ու բարեկեցիկ ընտանիքի մը միակ գաւակին հարսնացած մայրացած երիտասարդ կնոջ վերաբերումն է: Ան դրամ տեսած էր, ուրեմն հարկէր դասուէր հարուստներու դասակարգին, դասակարգ: «Մերստեան» ինքնաշարժով ներկայ ըլլար դպրոցի ծնողական հաւաքովներուն, իր գաւակը հասցնէր դպրոց, եթէ «տէտէն» զբաղած ըլլար: Մտածեցի նաեւ հարստանալու առիթին ու պատեհութեան մասին: Ուրեմն մենք միշտ աղքատ պէտք է մնանք... Հարստութիւնը մեր թշնամիքն է...

Չարեւոյ գրողը, նիւթը փոխեցինք: Խօսակցիս տեղեկութիւնները կու տար ամուսնային արձակուրդի, գիւղագնացութեան բարիքին, իր պատրաստած ձմրան պա-

շարին մասին: Կը լսէի, բայց միտքս եւ սիրտս այդ երիտասարդ դասակարգ մօր կեցուածքին վրայ կեղծուեցան: Երբ հարցուեցաւ մեր լեզուի մէջ կուրկէս սենեակնոց բնակարանէն դուրս ելած ու բարեկեցիկ ընտանիքի մը միակ գաւակին հարսնացած մայրացած երիտասարդ կնոջ վերաբերումն է: Ան դրամ տեսած էր, ուրեմն հարկէր դասուէր հարուստներու դասակարգին, դասակարգ: «Մերստեան» ինքնաշարժով ներկայ ըլլար դպրոցի ծնողական հաւաքովներուն, իր գաւակը հասցնէր դպրոց, եթէ «տէտէն» զբաղած ըլլար: Մտածեցի նաեւ հարստանալու առիթին ու պատեհութեան մասին: Ուրեմն մենք միշտ աղքատ պէտք է մնանք... Հարստութիւնը մեր թշնամիքն է...

Եթէ դրամ չունենանք, հայկական վարժարան պիտի ուղարկենք: Եթէ հարստանանք, քիթով պիտի արհամարհենք մեր աւանդութիւնը, մեր լեզուն, մեր գանձ-մշակոյթը: Ու հիմա տեղին չէ՞ կրկնել անմահ համար «Հայերուս թուրքը» երկնէ գոնէ տուն մը հոս՝ իրրեւ «պատեհամ» մեր ազգը ուրացող հարստներուն, մայրերուն եւ միւսներուն:

«Դուք խելօք հաշուով վաճառական ես, Միւլք, փող, ապրանք կ'ստան շատ ունես, Բայց քե՛ք քու փողդ շահ բուցի Հայաստան, թո՛ք է՛ եմ, ք՛ո ալ, փողդ ալ վրան»:

ՇԱՀԱՆ ԴՈՒՍԵՆ

## ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝ ԼԱԻՎՈՅՆ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ «ՎԱՀԱԳՆ» ՄՐՑԱՆԱԿԻ ԴԱՓՆԵԿԻ ՍԱՐԻՆ ԽԱԶԻԿԵԱՆԻ ՀԵՏ

27 Սեպտեմբերին Հայաստանի մէջ տեղի ունեցած «Վահագն» արուեստի եւ գրականութեան մրցումը, որուն ծիրին մէջ լաւագոյն դերասանուհիներն առաջին դիմումները մրցանակին տիրացաւ իր բանաձեւով դերասանուհի եւ «Վահագն» Փափագեանի «Պաղատար աղբարը»:

Համար թենքի Ուիլիամսի «Մենակութեան վերջին կանգաւոր» («Սթրիթ»-ը) մրցումը, որուն ծիրին մէջ լաւագոյն դերասանուհիներն առաջին դիմումները մրցանակին տիրացաւ իր բանաձեւով դերասանուհի եւ «Վահագն» Փափագեանի «Պաղատար աղբարը»:

Ներկայացած էինք Վարդան Մկրտիչեան եւ ես՝ 2002ի «Երեւան»-ը կը մնան երեխաները՝ թատերախաղին դերակատարուհիներով: Ինչ հոգիէ բաղկացած դասակարգ կազմը լաւագոյն դերասանուհիի առաջին եւ միակ դիրքին մրցանակը շնորհեց ինձի: Նշեմ, որ նախորդ տարի այս մրցանակին տիրացած էր Վարդան Մկրտիչեանի «Վարդան Մկրտիչեանի իր»:

«ԱԶԳԱԿ».- Ի՞նչպէս մուտք գործեցիք թատերական բեմ:

ՍԱՐԻՆ ԽԱԶԻԿԵԱՆ.- 1994ին «Հայկազեան» համալսարանին մէջ ուսանողական թատերախումբի կազմութեան յայտարարութիւնը տեսայ եւ դիմեցի: Այդ տարիներուն բեմադրիչն էր հանգուցեալ Մուշեղ Մուղալեանը, որուն հետ ներկայացողինք անգլերէն լեզուով ուսանողական երկու թատերախումբ «Պետրուս Ֆարս» եւ «Ծուլ»: Մանկութենէս սիրած եմ թատերոյնը եւ գիտեմ, որ այնքան լաւ եմ իմ կարողութիւններս: Սակայն Հայկազեանի թատերախումբը առիթ դարձաւ, որ աւելի կապուեմ անոր: Այդ իսկ պատճառով 1997ին դիմեցի ՀԵԼԻ «Վահագն» Փափագեանի «Պաղատար աղբար»-ին, որ վերաբերումներս հանգրուանի մէջ էր:



«Ա.».- Ի՞նչպէս փոխադրուեցիք թատերական բեմ:

Ս.- Երբեք չեմ զգանք իմ թատերական կարողութիւններս: Ինձի համար մեծ պատիւ եւ ուրախութիւն է ընդունիլ այս մրցանակը, որուն կը կարգաւորուի «Վահագն» Փափագեանի թատերախումբին բոլոր անդամներուն շնորհիւ:

«Ա.».- Ձեզի համար ի՞նչ կը նշանակէ թատերական բեմ:

Ս.- Ինձի համար թատերական բեմն է ինչ է: Եթէ մէկը կը սիրէ ապանձս եւ կերպարանափոխուի չհերոսի:

«Ա.».- Ի՞նչ թատերախաղերու մէջ դեր ստանա՞նք:

Ս.- Թատերախումբին հիմնադիրներէն Պերճ Ֆալեանի բեմադրութեամբ ներկայացուցինք «Վահագն» Փափագեանի «Պաղատար աղբար»-ը: 2001ին թատերախումբը փոխեց իր բեմադրիչը եւ բախտաւորութիւնը ունեցանք իրրեւ բեմադրիչ ունենալու հայրենի վաստակաւոր արուեստագէտ Երուստի Զաւենեանը: Այս հետ մեր առաջին ներկայացումը, որ կարեւոր հանգրուան մը եղաւ թատերախումբին անդամներուն

«Ա.».- Վերջերս, իբրեւ լաւագոյն դերասանուհի, արժանացաք Հայաստանի մէջ տեղի ունեցող համալսարանական «Վահագն» մրցանակին: Կրնա՞ք մանրամասնել այս մասին:

Ս.- Ինձի համար մեծ անակնկալ եղաւ, երբ ՀԵԼԻ «Վահագն» Փափագեանի «Պաղատար աղբար»-ը ընտրուեց լաւագոյն դերասանուհիի մրցանակակիր: Լաւ թատերական կ'ազդէ հանդիսատեսին կեանքին եւ անոր կը հաղորդէ մտածումներ եւ զգացումներ:

«Ա.».- Ինչպէս թատերական բեմը փոխադրուեցիք թատերական բեմ:

Ս.- Ինձի համար մեծ անակնկալ եղաւ, երբ ՀԵԼԻ «Վահագն» Փափագեանի «Պաղատար աղբար»-ը ընտրուեց լաւագոյն դերասանուհիի մրցանակակիր: Լաւ թատերական կ'ազդէ հանդիսատեսին կեանքին եւ անոր կը հաղորդէ մտածումներ եւ զգացումներ:

## ԲԱՄԲԱՍԱՆՔ, ԹԷ ԲԱՆՆ ԱՍԱՆԿ

Պուրն Համուտի Արագած-Պօղոս Արիսի թագավաների անցնող նոր կամուրջը բացուած է արդէն Էջրեֆիէի ծայրամասերէն իջնող ինքնապատու կամուրջին «սահուն» երթուղիին եզերուած է նաեւ կողմերուն բարձրացած ապահովութեան պատերով:

Կամուրջին անցնողները գայն կը մտնեն Բալիֆորնիայի Լաս Վեկաս քաղաքի կամուրջներուն մէկ «թեխին»:

Կամուրջին շատ մօտիկ կանգնած շէնքերու բնակիչները իրենց պաշտպաններէն ու պատուհաններէն կրնան սիրալիք բարեւել ծանօթ թէ անծանօթ անցորդներու: Դժգոհելու փոխարէն լաւատեսութիւն կը ներշնչէ:

Ու վերջապէս, այս օրերուն «Խաւարը անիծելու փոխարէն կ'արժէ մտ' մը վառել»...

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ ԿԸ ԳՐԵՆ

«ԱԶԳԱԿ»-ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ «ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

17 - 10 - 2003

# Գրական Հե

## ԱՐԹՈՒՆ ԱՆՏԱՌ-ԱՊՊԱՆՆԵՐ

«Մենք վարժուել ենք մեր երկրի խորհրդանշանը համարել խանութում ու ամառի սարերն ու հարթավայրերը: Ել յաճախ մոռանում ենք այն ճղի ու գունդը բնութիւնը, որը դարձրել էր կերակրելի մարդկանց, փառքերը ու հագգրել: Անփառը երբեք չի խաբուի: Նա մոր նման վարժուում է, սակայն չի սպառում»:

ԼԵՒՈՆ ԱՆԱՆԵԱՆ

Երբ 1967ին հայրենի գրական մամուլը հարձու տացաւ երիտասարդ գրողներու եւ հրապարակագիրներու պաշտօնական բեմը ըլլալու կոչուած «Գարուն» ամսագիրով, անոր խիզախ խմբագիրին՝ տարաբախտ արձակագիր եւ հրապարակագիր Վարդգէս Պետրոսեանի շուրջ խմբուեցան ոչ միայն Պարոյր Սեւակի, Սիլվա Կապուտիկեանցի եւ Համօ Սահեանի միմեք վաւերական դէմքեր, այլեւ՝ գրական սպարքը նոր մուտք գործած շնորհալի երիտասարդ գրողներու հոյլ մը՝ Մուշեղ Գալշոյեան, Ալեքսանդր Թոփչեան, Գրիգոր Զանգիլեան, Արեւշատ Աւագեան եւ այլն: Վերոյիշեալ եւ արժանաւոր այլ երիտասարդ գրողներու անմիջապէս միացան ամբողջովին անծանօթ նոր անուններ՝ Յովհաննէս Գրիգորեան, Հենրիկ Էդոյեան, Արտեմ Յարութիւնեան, Դաւիթ Յովհաննէս, Սլաւիկ Զիրոյեան, Վրէժ Իսրայելեան, Ալվարդ Պետրոսեան, Վահագն Գրիգորեան, Վահէ Պողոսեան եւ ի վերջոյն օտարում այլ բարձր ուժեր, որոնք նոր շունչով, երիտասարդական աւելումով եւ արդի մտածողութեամբ օժտեցին հայրենի գրականութիւնը, արդարացունցին իրենց երիտասարդ գրողի կոչումը եւ իրաւամբ կոչուեցան «գարունակներ»:

Հակառակ ազատ մտածողութիւնն ու արտայայտութիւնը կաշկանդող արգելքներուն, «Գարուն»ի էջերէն հնչող նոր ձայները եղան անկալկա, որոնք երբեմն եթէ կատարեցին տողատակի լուծելանք ընդգծումներ, եղան նաեւ պարագաներ, երբ հարցադրումները հնչեցին քաղաքացիական պատասխանատուութեամբ եւ հայ գրագէտին վայել արուբեամբ: Սերունդներ յաջորդեցին սերունդներու, շարքեր խտացան նորանոր նուիրեալներով եւ «Գարուն»ը բառին բովանդակ առումով դարձաւ այն բազմաբան գանգաւոր, ուր ծխեցաւ, ծաղկեցաւ եւ դիմազիծ ու նկարագրի ստացաւ նոր անուններուն զգալի տոկոսը:

1980ական բուռնացումներուն, ի շարք այլ ուշագրաւ երիտասարդներուն, «Գարուն»ի էջերուն տակաւ առ տակաւ սկսաւ ամբողջացալ դիմագիծը հայ ժողովուրդի ցարերով ու երագներով, բայց մա՞ն գտանց հայրենի գիւղին եւ բնութեան հոգեբով տագնապող տեսլանքար երիտասարդ հրապարակագիրի մը՝ Լեւոն Անանեանի: Իր սուր դատողութեամբ, հարցերուն խորքը բափանցելու առողջ իմացովով եւ ճշմարտութիւնները բացայայտող բնագրի յանդգնութեամբ Լեւոն Անանեան իր ստորագրութիւնը օժտեց լրջախոն վաւերականութեամբ մը, որուն առաջին յատկանիշը եթէ ճշմարիտ արժեքներու հանդէպ իր ցուցաբերած հաւատարմութիւնը եղաւ, երկրորդը, անկալկած, մեքրամաքուր բարոյականութիւնը հանդիսացաւ: Նոյնիսկ երբ ան բուրժուական ծրագրային անկարկներ եւ ժամանակի պարտադրանքներուն լոյսին տակ ձեւաւորուած յօդուածներ, փորձեց գրել «հայկական անճշտ ոգու մասին» խտացուած մեր ուկեղեցիկ լեզուի մէջ», որովհետեւ ան հասած էր այն հաստի համոզումին, որ «ամէն ժողովուրդի լեզու իր հոգեւոր հարստութեան ցոլացումն է», եւ թէ «երկու սրբութիւն կայ աշխարհում՝ մայրն ու հայրենիքը: Եւ որ մօրը չկորցնելու համար պէտք է պաշտպանել հայրենիքը»:

Աւելին եւ. հայ ժողովուրդի բարոյական արժեքներուն, հայրենի բնաշխարհին, մենքուպաւանդ մեծաբան չիլին, նահատակներու բանկ արեւմտեան նուիրականացած ազգային գաղափարախօսութեան հանդէպ ունեցած իր պաշտամունքն ու հաւատարմութիւնը Լեւոն Անանեան վերածեց գրական-հրապարակագրական հաւատամքի, երբ Հայաստանի անկախացումէն ամիջապէս ետք ստանձնեց «Գարուն»ի խմբագրապետի պատասխանատու պաշտօնը: Հակառակ տնտեսական, քաղաքական եւ այլ դժուարութիւններուն, ան անխաբար եւ պայծառ պահեց անկախ ու խիզախ բեմ հանդիսանալու նախապայտուած այս ամսագիրին բարոյական դիմագիծը, գայն օժտեց շարունակականութեան անհրաժեշտ կոնունքներով, վերանորոգ թարմութեամբ եւ արժաններուն պատգամից ակնաշալուր՝ նորարողութեամբ սաղարթները առաջնորդեց դէպի երկնագոյն բարձունքներ:

Բարոյական այս ընտիր որակը, նախածնունդութեան ոգին, կազմակերպչական տաղանդն ու հաւատարմութիւնը, աւելի քան երկու տարի առաջ, Լեւոն Անանեան փոխարինեց Հայաստանի Գրողներու Միութիւնը: Մրցութեց ու գործեց, գործակիցները վարակեց անմնացորդ նուիրումի կրակով եւ իրաւամբ եղաւ ո՛չ միայն Հայաստանի Գրողներու Միութեան արժանաւոր նախագահ, այլեւ շարունակական մեկ իր բեղուն տարիներուն արդար վաստակին արժաններով հաստատուած հայ գիրին, արեւան եւ բնութեան արքուն անտառապահը:

Ս. ԿԻՐԱՎՈՍԵԱՆ

## ԱՐԱՄԱՏ ԵՒ ՍԱՂԱՐԹ

Ես գալիս եմ դէպի քեզ, ինչպէս ուխտաժայր եմ գնում, ինչպէս յիշողութեան զրնդուն գնացքներով գնում եմ դէպի սեփական մահկանանք: Ո՛չ հոգին ու մարմինը պնծած տարեց զրօսաշըրճիկ նման, որ մի ոտքէն աշխարհում՝ երեխաներին ամուսնացնում է օտարների հետ, թողնելով կնքում երկու անունով եւ օտարալեզու կրթութեան տալիս, իսկ ինքը մեկնում է ծննդավայր... Հրաժեշտի քաղաքավարական այցով: Ես գալիս եմ դէպի քեզ, ինչպէս կը գնան խորքը հոգու՝ անքննելի ու անտարբեր... Եւ ամէն անգամ քեզ գտնում եմ նոյնը, նոյն, նոյնը...

Գալիս եմ ոտարուպիկ, անձրեւաշիթի խշուղ ծակ տրեխներին կաշեթել հանգոյցներում, գլխաբաց, չձեւաւորուած դիմագծերով, խակ, ինչպէս Յուլիսի մասուրը: Գալիս եմ իմ սերնդի, մեր հայրերի ու պապերի դժուար անցեալը փնտրելու քո խոսուն ու ներամփոփ ձորերում, քո բարձր ու հպարտ լեռներում, քո անանձնական երկնքում: Կապույտ-կապույտ մի երկինք, որ բոլորինս է եւ ոչ մէկինը չէ, ուր ամպի ծուկներինց ասեղնագործում էինք մեր մահկանութեան նախաընկալ արարանները, որ յետոյ, անհասանկանօրէն հեռու թռուցող հասունութեան տարիքում, մեր որդիներին կտակենք պարելու, երագելու եւ կառուցելու իրաւունքը:

Երագելու իրաւունքը... Պառկում եմ մէջքի վրայ, գոյն-գոյն երիցունկներ եւ դեղին խատուտիկներ դաշտում, հայեցող թափառ ամպերին: Կաթնագոյն բուրբուկները պատկերներ են հիւստում եւ այնտեղ ընկնելուն մը իսկ յօրինած հեքիաթներին հերոսներին: Նրանք, ովքեր գնացել են, ամպ են դարձել: Թեթեւ, աննիւթեղէն,

բարի: Այնպէս վարժ ես նկարում նրանց դէմքը, մագերը, մարմինը, նոյնիսկ յուզմունքն ու ուրախութիւնը: Դու նրանց ճանաչում ես, ինչպէս սեփական գաւակիդ՝ մինչեւ չափահաս դառնալը: Ջերմանում ես անջրատեղի մէջ, իսկ նրբագեղմ դառնելը վաղուց խախտել են արտի սահմանները եւ դաշտապահի զգօն աչքից վրիպելով՝ խաղաղ մակաղել ծնկահաս ցորենի ստուերում: Գիւղի խոր երկինքն աննկատ, պունկ-պունկ լցում է աստղերով, ասես, մարգարիտով լի պնակ լինի՝ կապույտ արծնապակիով ընդելուզուած: Եւ օդը գնդում է առասպելներից: Եւ առասպելները ճարտար են թափանցիկ-ծակոտկէն օդում, մի մասը խոռանցած ժամանակի գոլմշուկներից, մի մասը թարմ... դիցաբանական հումք:

Մտահոգ, կորուստներից ու կարիքից ասես գոլակն աչքերին քաշած տները, որոնք քարայրների նման մագլցում են լեռներն ի վեր, սրսփում են ձէթի ճրագների դողերոցով՝ խաւարի մէջ յիշեցնելով մեռնող լուսատիկներին: Դեռ յետոյ պէտք է փողոցները խափառապատ մայթերը եզերուեն ընական զազի խրամատներով: Դեռ յետոյ պէտք է զիւղը վտարի խաւարը, ողողուի լոյսով, եւ ծիծեռնակը ուրիշ թաքուն ծերպ չգտնելով՝ բոյնը շինի մետաղէ ելեկտրասինը պսակող լայպտերի խոռոչում... դառնայ լոյսի նահատակ:

Իսկ հիմա թափ ես տալիս շորերիդ փոշին ու փոխու հետ քեզ պաշարած առասպելները եւ դառնելը տունը քշելով, անթեղուած յոյսի պլպլոցով դիմում մառախուղի մէջ երթողին մուրրած ինքնաթիռին:

- Աէրուպան, աէրուպան, հօրեղորիցս լուր չունես... \* \* \*

Ես կրկին տեսայ քո առաւօտը, որ կաթնծիրի պէս սփռում է բնակիչները դաշտերում, այգիներում, Ֆերմաներում, անտառում եւ (այո՛, այո՛) գործարանում: Մաշկիս տակ ձուլեցի քո կէտը, կիզիչ արեւից կծղած արտերով, թթեխները գանգուր սաղարթներին բզզացող մեղմներով: Վերստին համոզուեցի, որ այգիները բուրում են մանուշակով եւ երբ թեթեւ, կամեբային իրկուկուղ լուսանում է մարդկանց յոգնութիւնը, դու ցնորք ես թուում, տեսիլք:

Եւ երբ բաժանուեցի քեզինց ու կրկին յայտնուեցի քաղաքի փողոցներում, ինձ թուաց, թէ քարէ յիշեցներ են թափուած վրաս, քարի կարկուտն է պատել աշխարհը: Եւ մի անյաղուող զգացում տեսիլի պէս հայածում է ինձ ամէնուր:

Քո կարօտն է: Ես կարօտում եմ քո կուսական անտառներին, ոտարուպիկ վազվզող քո տղեկներին, քո տապ ու հասուն կէտօրին, որի քուրմն եմ ես... Եւ ամէն անգամ քեզ յիշելիս, մտածում եմ. այդ ե՞րբ է եղել, որ իմ ժողովուրդը 35 տարի կուռ ու կոտորած չի տեսել: Աստուած թող շատ չհամարի: Թող աճես այսպէս, օրորցներդ բազմանան, եւ գաւակներդ վազվզեն անապական սարերում՝ կարմիր քերքէջը այտերին... Լ. ԱՆԱՆԵԱՆ

(Հատուածներ - 1980)

## ՃԱԿԱՏԱԳՐԻ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՔՄԾԻԾԱՂԸ

Քունը չէր տանում: Կայանից հեռացաւ կէս գիշերին, յոգնած, հիւանդ, թուում էր՝ անկողնուն չի հասնի, կիսամեռ կ'ընկնի... Բայց ա՜նա չէր կարողանում քնել: Մտքերը տենդի պէս հալածում էին նրան, եռեփ գալիս, ծուռուտում հոգին, աչքը չփակած՝ ընկնում էր մղձաւանջի մէջ: Յուշիկ քայլերով, որպէսզի չարթնացնի գործընկերներին, դուրս ելաւ զինուորական վրանից: Թալանուած-բզկտուած խալոողի աչքիներուն խաղաղ երգում էին ծղրիթները, եւ երկինքն աստղազարդ էր, եւ լուսինը սովորականի նման թառել էր դիմացի սարի կատարին, եւ գեղունիչ ըրարտիներն էին սօսափում քամու սարսուռներից... Երկինքը բարձր էր, արտառոց բարձր Սեպտեմբերի համար: Մի պահ զարմացաւ, մի՞թէ 1915 թուականը չէ՞. ինչո՞ւ է երկինքն այսպէս պայծառօրէն լցուած աստղերով, ինչպէ՞ս են ծղրիթները հողիներգօրէն ճոռուտում, լուսինը անշտապ սահուն դէպի իր լրումը... Չէ՞ որ հայոց աշխարհի վրայ կիսալուսինի մահազուշակ, կեռ մահիկն է՝ դաջուած դահիճների դրօշներով, եսթաղաններին, դէմքերին...

Չորակի կողմից լուում էր կազակների երգը: Ուրեմն, նոյնիսկ հնարաւոր է երգել, երբ շուրջը արեան գետեր են ու արհաւիրք: Այո, քո ցուր բռնի, նուում է քո մաշկի տակ, այդ թերեւս միակ անբաժանելին, անհնար է ներարկել ուրիշին: Նրա մաշկն էլ ներծծուած է իր ցաւով, իր հոգսով: Դու ես քո ցաւի տէրը: Արդէն մէկ տարի եղաւ, ինչ զօրակոչուել է բանակ, թուրքական ճակատում մասնակցել է իր, էլրեկ, Շաքարի, Պինյակ եւ այլ գիւղերի մարտերին, Արտասանի գրաւմանը: Սակայն ծայր պահան հայկական զանգուածային կոտորածները, եւ նա զինուորական համազգեստը փոխարինեց բժշկի խալաթով: Գրիգորը նոյնիսկ հիմա, սովորութի համաձայն, ճեփ-ճեփմակ խալաթ էր հագնում, որը համեմատում էր բժշկի խղճի հետ: «Այսպէս անբիծ պէտք է լինի բժշկի ինիզը»: Այդ ինիզն էլ նրան անբաժան էր պահում այս մերձիմահ ժողովուրդից: Այս ի՞նչ դժոխք է, Աստուած իմ... Ո՛րբեր, որբեր, անպապեան ու հալածական որբեր... Նրանք լցուած են գիւղաբազկի երեք եկեղեցիները, փողոցները, բակերն ու այգիները: Քաղթականների մագլցումը շարանը՝ սգոյ թափօր... Ամէն օր տեսնում էր այնպիսի պատկերներ, որ թուում էր, թէ այլեւս չի դիմանայ, կը կորցնի հոգու կորովը:

Ամէն որբի մէջը տեսնում էր իր գաւակներին եւ բարեգութ հօր նման իր գորովով ջերմացնում էր նրանց: Նա անդադար էր, բուն ու անդորր չունէր: Դիմեց ուղաձայնական ղեկավարութեանը՝ պահանջելով ուղաձայնակաւոր վերադարձող փոխարմիլոցները տրամադրել որբերին եւ հիւանդներին ապահով իգտիր՝ ընդունման կայաններ տեղափոխելու: Եւ ինչպէ՞ս էր հասցնում լինել ամէն տեղ՝ բուժում էր հիւանդներին, դեղորայք էր բաժանում, սնունդ հայթայթում: Եկել էր ամենածանր բնութեան ժամանակը՝ ապացուցելու, որ իր անձն ու գիտութիւնը բոլորանուէր պատկանում են ժողովուրդին: Եւ այնքան շնորհակալ էր իրեն, որ չսահմանափակուեց մի մասնագիտութեան շրջանակում: Մինչ այդ իր արածը թուում էր ծիծաղելի, անհեթեթ, չնչին գոհողութիւն: Արեան ու աւերի մէջ օր-օրի կոփում-թրծում էր նրա կամքը, տոկունութիւնը, եւ նա ոգեկոչում էր իրեն. պէտք է դիմանայ, դիմադրել:

Այդ ժամանակների անցուդարձից պահպանուել է միայն մէկ յուշ: Միակ սկզբնաղբիւրը, որի հեղինակը իգտիրի հասարակական գործիչ Գեղամ Պուլուզեանն է: Նա պատմում է, թէ գիւղաբազկի բնակչութիւնը ինչպէս էր յարգում ու սիրում բժշկին որպէս ժողովրդի անկաշառ բարեկամի: Այդ սիրտ հիմնադրուած նրա անձնագոհ նուիրումն էր: Նա սահմանել էր մի սկզբունք եւ պահպանում էր բոլորից՝ ազնիւ, հոգատար, զթափառ վերաբերմունք տարաբախտ երեխաների ու հիւանդների հանդէպ: Թիկունք ուղարկելիս Սաղեանը խմբաւորում էր որբերին համապատասխան ձեռնարկութիւնների յանձնելու համար, եւ ինչպէս վկայում է յուշագիրը, ջերմ ու սրտառու հրաժեշտի պահին որբերը թախանձում էին որդիբարբ՝ դու էլ մեզ հետ արի: Գրասեղանիս հնօրեայ մի լուսանկար կայ՝ «Իգտիրի որբանոցը,

1915 թուական, Դեկտեմբերի 15» մակագրութեամբ: Սաղեանն է՝ շրջապատուած որբերով... Անհնար է անտարբեր նայել այդ նկարին, այդ որբերին, որոնց հայեցքները յոյսի մի շողով ասում եմ լուսանկարին, եւ Գրիգոր Սաղեանի գիտարտութեանն ուղղուած այդ խնդրանքը յորդ ունկերիս մէջ հնչում է քսան հազար որբերի արձագանջով, որոնց վերահաս մահուան ճիրանները կարողացաւ փրկել նա: Հուսանկարը նոյնպէս Գեղամ Պուլուզեանին է, որին Գրիգորը յորդորում էր հնարաւորին չափ շատ վաւերազրեր ստեղծել, եղեռնի պատկերները յաւերժացնել գալիք սերունդների համար:

- Հայ ազգի տառապանքների պատմական անհերքելի փաստաթղթերը պէտք է պահել խնամքով, ապագայի համար: Դրանք ցեղասպանութեան մեղադրականներն են:

Նա վստահ էր, որ չի կարող չպայթել երկնային պատիժը թուրք մարդակերներին գլխին եւ, որ կը գայ, անպայման կը գայ հատուցման օրը, ու ինքը բախտ կ'ունենայ մասնակցել ժողովրդեան վրէժին: Ու մի օր էլ, երբ թուում էր, թէ այլեւս ոչինչ չի կարող ցնցել տպաւորութիւններից կարծրացած սիրտն ու հոգին, նրան վիճակուած էր կարկամել զարմանքից: Շտապ կանչեցին օգնութեան... Գարնան ցուրտ, ճեքքան առաւօտ էր: Մտոյց կապած եղեամի վրայ սայթաքելով, նա հասաւ դէպի վայրը. այն, ինչ տեսաւ, երբեք այլեւս չէր մոռանալու: Երկու պառուներ՝ գլուխ-գլխի տուած, թեւերով օղակել էին մի փոքրիկ, դանդաղահեր տղայի եւ իրենց շնչով պատասխանելու նրան գիշերական թրատող ցրտից: Այդպէս էլ, ինչպէս թխամոր փետուրների տակ ծուարած ճուտիկ, երեխան փրկուել էր ցրտահարումից: Իսկ պատանները մարել էին՝ յարութիւն տալով այն մատղաշ շիւղին, որ պէտք է վերընծիւղէր իրենց տոհմը եւ տէր կանգնէր նրա արդար դատին...

Քնաթաթախ երեխան ճշում էր, հեկեկում, փորձում ազատուել կաշկանդող կապանքներից, բայց ստաւ բազուկները ներս էին հրում նրա մահուան օղակ, ստիպում պատէ պատ խփուել, անընթել դրօշմելով այդ պահը նրա մաշկի տակ, որպէս անամբ ցաւ եւ անկորչելի յիշողութիւն: Գրիգորը կարգադրեց կացնահարել դիակները եւ փոքրիկին անյապաղ փոխադրել հիւանդանոց:

Ամիսներ շարունակ նրան հաւանում էր նոյն մտապատկերը՝ սառած-ուկորացած ափերի վրայ առանց հող ու ջրի ծլարձակում էր դողողուն մի սերմ՝ կեանքի, յարատեւութեան հունտը:

- Ո՛չ, հայր չի կորչի, չի վերանայ երկրի երեսից, - մտածում էր Սաղեանը, - չի ձուլուի ուրիշների հետ, չի ուրանայ իր հաւատը, մեքուք եւս տառերը: Բաւական է մի քանի տարուան խաղաղ կեանք, եւ ա՜նա այս փրկուած նշխարների ձեռքերով նա յարութիւն կ'առնի...

Եւ որբացած երկրի նման մէն մի որբ թերթիկ է մեզ հասել Սաղեանի իգտիրեան օրագրից: Անհնար է այդ փոքրագիր էջն ընթերցել առանց սարսուռի: Թղթի այդ պատասխան նոյնքան տարեկան է, որբան մեր ժողովրդի ողբերգութիւնը: Որբան էլ ողբերգութեան տալիքը մեծանայ՝ տարեց չի դառնում: Քանի կ'այ ժողովուրդը, կ'այ ինչ ողբերգութիւնը: Եւ այս միամտրիկ թերթիկը կայ: Իսկ այդ թերթիկից շատ քան չի կարելի կորցնել: Առաջին ու վերջին անգամ Գրիգորը գրում է անխնամ ու անընթեռնելի, երբեմն կէս գիշերին, երբեմն ծնկի վրայ՝ գուտ իրեն հասկանալի յապաւուածներով: Այդ հակիկա խորհրդում առկայծում է որբերի թշուառ վիճակը, իր ընտանիքի անորոշ ճակատագիրը, հիացմունքը Արեւմտահայաստանի ընտրութեան նկատմամբ:

Լ. ԱՆԱՆԵԱՆ  
(Հատուածներ - 1983)



# ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՆԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ


ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



## ԲՋԻՋԱՅԻՆ ՀԵՌԱՁԱՅՆՆԵՐ՝ ՆՈՅՆՊԷՍ ԺԱՀՐԵՐՈՎ ՎԱՐԱԿՈՒԵԼՈՒ ԵՆԹԱԿԱՅ



ԲՋԻՋԱՅԻՆ ՀԱՊՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ԺԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԺԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱԾԱՅԻՆ, շՆՈՒՄ ԿԱՆԹՈՆԱԿԱՆ ՀԱՊՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀ ԵՆՈՅՆԱԿՆ ԱԿՏԻ ՍԿՍԻ ՍԱԳՆԱԿՅՈՒՆ ԵՆԿԵՐՈՒՄ ԺԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՎ:

Տրուած ըլլալով, որ հսկայածաւալ տեղեկութիւններ այսօր անթել հաղորդակցութեան միջոցներով կը փոխանակուին, այս սպառնալիքը աւելի քան երբեք լուրջ է:

Թէեւ «լէֆթօն»ներ եւ անթել հաղորդակցութեամբ համացանցին թէ՛ այլ ցանցերու կապուող սարքեր ցայսօր նուազ ենթակայ եղած են ժահրերու սպառնալիքին (եթէ անշուշտ պահպանուած ըլլան ապահովութեան չափանիշները), սակայն մասնագէտներու պնդումով տակաւին հարիւր առ հարիւր պահանջով գրութիւններ գոյութիւն չունին, եւ անթել հաղորդակցութեան զարգացումով նաեւ կ'աւելնայ այս սարքերուն ինքնաբերական կողմէ յարձակումներու թիրախ դառնալու հաւանականութիւնը:

Վերջերս «Մայքրոսոֆթ» ընկերութիւնը հրատարակեց



կեց «Մամրիթ ֆոն»-ի նորագոյն տարբերակը: Այս վերջինը՝ բՋԻՋԱՅԻՆ ՀԵՌԱՁԱՅՆ մըն է, որ կ'օգտագործէ «Ուինտոզ» գրութիւնը՝ տեղեկութիւններու փոխանակման համար:

«Մամրիթ ֆոն» թէեւ ցարդ ժահրերու յարձակումի չէ ենթարկուած, սակայն նոյնինքն «Մայքրոսոֆթ» կը խոստովանի, թէ ժամանակի հարց է այս մէկը եւ նման յարձակում մը կրնայ որեւէ առեւտրականութիւն դառնալ:

## ՀԱՄԱՑԱՆՑԻ ԱՐԱԳՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՄՐՑԱՆԻՇ

Գիտական երկու մեծ կեդրոններ 15 Հոկտեմբերին յայտարարեցին, թէ հաստատուած են համացանցի արագութեան նոր մրցանիշ մը՝ երկվայրկեանի մը ընթացքին 5,44 կիկապայթ փոխանակելով: Այս մէկը համագործ է ՏԻՎԻՍԻ ԺԻՍԻ ԺԻՍԻ ԺԻՍԻ ԺԻՍԻ մը 7 երկվայրկեանի մէջ համացանցի միջոցով փոխադրելու:

Հիւլիական ուսումնասիրութիւններու եւրոպական կազմակերպութիւնը ժրնեւէն Քալիֆորնիա փոխանցած է 1,1 թերապայթ տեղեկութիւն՝ 30 վայրկեանի ընթացքին:

Այս մէկը 20 հազար անգամով աւելի արագ է համացանցի «պրոտոկոլ» գրութիւններէն եւ համագործ ՄԻՏԻ-ի մը պարունակութեան փոխանակումին:

Արձանագրուած այս մրցանիշը առաւել եւս կը մօտեցնէ գիտնականներու զերազոյն նպատակը, որ հեռուաւորութիւն հասկացողութիւնը բոլորովին շրջանցելով տեղեկութեան երկվայրկեանական փոխանակումն է:

## ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգայն»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթանիլ գիրով (հաստատութեան պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազգայն»ի ծանուցումներու գրասենեակը:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՈՒԵՍԸ ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ՎՐԱՅ


Ստորեւ կը ներկայացրենք հայ գեղանկարչներու, մանրանկարչներու եւ ծագողներու նուիրուած փունջ մը կայքեր, որոնք, թէեւ ոչամրողական, սակայն ընդհանուր տպաւորութիւն մը կու տան հայկական կերպարւեստին մասին:

• [www.iatp.am/yafa/elibrary/books-am/sargis-pitsak/index1.htm](http://www.iatp.am/yafa/elibrary/books-am/sargis-pitsak/index1.htm)

Մաղկող Սարգիս Պիծակի արուեստին նուիրուած կայք, ուր յայն տեղ տրուած է անոր ստեղծագործութիւններուն, ըլլան անոնք լուսանցանկարներ, աւետարանիչներու նկարներ, թէ Աստուածաշունչէն ներչնուած այլ գործեր:


• [www.iatp.irex.am/resource/artcul/saryan](http://www.iatp.irex.am/resource/artcul/saryan)

Մարտիրոս Սարեանի



նուիրուած այս կայքը կը ներկայացնէ արուեստագէտին կենսագրականը, լուսանկարներ, ինչպէս նաեւ՝ անոր արուեստի գործերէն նմուշներ: Սարեանի նուիրուած այլ կայքերն է [www.armsite.com/painters/saryan](http://www.armsite.com/painters/saryan):

• [www.iatp.am/yafa/elibrary/manrankar/index.htm](http://www.iatp.am/yafa/elibrary/manrankar/index.htm)



## ԵՐԿԱԿԵՆՑԱՂ ԻՆՔՆԱՇԱՐԺ

Հոկտեմբերի կիսուն Բրիտանիոյ արտադրած նորագոյն ինքնաշարժ կ'երթեւեկէր... Թէյմս գետի ջուրերուն վրայ:

Ցամաքի վրայ ժամական 160 քիլոմետր արագութեամբ ընթացող այս ինքնաշարժը անմիջապէս որ ջուրին մէջ իջնէ, անիւները կ'ամփոփուին ինքնաշարժին մէջ, եւ ան կը փոխակերպուի... նաւակի:

Ջուրի վրայ անոր արագութիւնը կը հասնի ժամական 40 քիլոմետրի:

235 հազար տոյար արժող այս ինքնաշարժը դռներ չունի, որովհետեւ այլապէս անոնց արանքներէն ջուր կրնայ թափանցել ինքնաշարժ-նաւակին մէջ. միայն ցատկելով կարելի է մտնել ինքնաշարժ:

Այս ինքնաշարժէն կը կառուցուի 100 օրինակ, որոնք վաճառքի պիտի դրուին տարեկերէին:

**ՀԱՄԱՁԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ԾՆԴԵԱՆ 100ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ**

**ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ**

Ելոյթ կ'ունենան

Հայրենի միջազգային դաշնակահար **ԱՐՄԵՆ ՊԱՊԱՆԱՆԵԱՆ**

Հայրենի տաղանդաւոր ջութակահար **ՄԱՐՏԻՆ ԵԱՒԻԵԱՆ**

Հովանաւորութեամբ **Լիբանանի մէջ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան ԱՐԵՎ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ**

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 25 Հոկտեմբեր 2003ին, երեկոյեան ժամը ճիշդ 8:30ին, Ամերիկեան համալսարանի «Էստեյլի հոլ»-ին մէջ

Տոմսերը ստանալ՝ **Down Town BHV Jnah BoxOffice**

Համազգայինի գրախանութին (Շաղկոյեան կեդրոն, Պուրճ Համուտ), Տիքոնք Գեքա (Պուրճ Համուտ), Սթիւտիո Վալէ (Հաճն), Obelisk գրախանութ (Անթիլիաս) եւ Ելոյթի օրը կիշէն կամ հեռաձայնել 01 - 249375 եւ 01 - 265899 քիւերուն:

## ՉԻՆԱԿԱՆ ՇՈՒԿԱՆ ՊԻՏԻ ԳԵՐԱԶՄԱՆՑԻ ԱՄԵՐԻԿԵԱՆԸ



Համակարգչային չիփեր պատրաստող աշխարհի մեծագոյն ընկերութիւնը՝ Ինթելը կ'ակնկալէ, որ մինչեւ 2010, տեղեկատուական արհեստագիտութեան, եւ յատկապէս՝ համակարգիչներու վաճառքի մարզին մէջ չինական շուկան գերազանցէ ամերիկեանը:

Այս տարի Չինաստան Միացեալ Նահանգներէն ետք, Ինթելը երկրորդ մեծագոյն շուկան դարձաւ:

«Ինչ կը վերաբերի համակարգիչներուն, Չինաստան հանդիստ կերպով երկրորդ դիրքը կը գրաւէ», «Ռոյթթըր»-ի յայտնեց Ինթելը պատասխանատուի մը՝ ակնկալելով, որ մինչեւ 2010 Չինաստանի մէջ աւելի համակարգիչներ վաճառուին, քան՝ Միացեալ Նահանգներու:

2002ին, Չինաստանի մէջ վաճառուած էր 11,3 միլիոն, Ճափոնի մէջ՝ 12,5 միլիոն, իսկ Միացեալ Նահանգներու մէջ՝ 47 միլիոն համակարգիչ:

Կ'ակնկալուի, որ Չինաստանի մէջ այս տարի ծախւի 13 միլիոն համակարգիչ՝ շուրջ տակ ձգելով Ճափոնի շուկան, ուր առաւելագոյնը 12,7 միլիոն համակարգիչ կրնայ վաճառուի: Ինչ կը վերաբերի Միացեալ Նահանգներու շուկային, 51 միլիոն համակարգիչ կարելի պիտի ըլլայ ցրուել այստեղ:

Չինական շուկայի պահանջները գոհացնելու նպատակով, Ինթելը շուտով այնտեղ պիտի վաճառէ 375 միլիոն տոյար արժող կեդրոն մը: Կեդրոնի բացումը տեղի պիտի ունենայ 2005ին:

**Պատրաստեց՝ ԽԱՉԻԿ ՍՈՒՐԱՏԵԱՆ**

**ՀԱՄԱՁԱՅԻՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՀԻՄՆԱՐԿ**

(Գործակցութեամբ եւ հովանաւորութեամբ Երեւանի Պետական Համալսարանի)

**Հայկական Նախակրթարաններու Ուսուցիչներու Որակաւորման Դասընթացը**

Համագործակցութեամբ՝ Ազգ. Առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդին

- ՆՊԱՍԱԿ Ուսուցիչներ օժտել անհրաժեշտ գիտելիքներով, համապատասխան լիբանանեան կրթական նոր համակարգի առաջադրանքներուն:
- Դասախօսութիւններ, քննարկումներ, գործնական կիրարկումներ եւ խմբակային աշխատանք:
- Տեսողութիւն՝ 2003 Նոյեմբերէն 2004 Յունիս
- Ամիսը մէկ անգամ՝ Շաբաթ օրերը, ժամը 8:30-էն 1:30
- Վայրը՝ Մ. եւ Հ. Արսլանեան Գեմարան, Մրզիեր

Դասընթացի ասարտին՝ համապատասխան վկայագիր

**Մանրամասնութեան համար հեռաձայնել 04 - 712603, 04 - 712604, 03 - 429685 քիւերուն**

Հայ Դպրոցի Զարգացման Ի խնդիր

# Մանկապատանեկան

## ՆՈՐ ՏԱՐԵՇՐՉԱՆԻ ԼԱՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Արդե՞նք քանի մը շաբաթ եղաւ, որ մենք դպրոց վերադարձանք: Մանօթաբանք մեր նոր ուսուցիչներուն, գնեցի՞նք մեր նոր տետրակներն ու գիրքերը եւ սկսանք մեր դպրոցական նոր ծրագիրը:


Եւ անշուշտ մենք պիտի ուզե՞նք, որ այս տարին ամենէն լաւ տարիներէն մէկը ըլլայ: Հետեւաբար միակ լուծումը լաւ որոշումներ տալն է:

Մենք լաւ որոշումներ կու տանք դպրոցական նոր տարեշրջան մը սկսելու մասին, որովհետեւ անորադարձած կ'ըլլանք, թէ նախորդ տարին կարգ մը բաներ լաւ չէին ընթանում:

Լաւ որոշումներ տալու համար պէտք է նախ յիշել, թէ ո՞ր ընթացքները կամ սովորութիւնները հարց կը ստեղծէին: Օրինակ՝ «Պարտականութիւններս միշտ վերջին վայրկեանին կ'ընեմ եւ քանի չեմ կրնար կանուխ քնանալ, որովհետեւ դասերս վերջացուցած չեմ ըլլայ»:

Դուք ան ինչ ուզեք անցնել տարուան նման գէշ փորձառութիւն մը վերադառնալու: Շուրջիններէն որ խնդրէ, որ քեզի արգիլէ ուրիշ որեւէ մէկ զբաղում ունենալ դասերդ վերջացնելէ առաջ:

Շատ որոշումներ միտար: Եթէ չկարենաս անոնց հետեւիլ, կրնաս յուսահատիլ: Նախընտրելի է առաւելագոյնը երկու կամ երեք լաւ որոշում տալ եւ կանոնաւոր կերպով պատկէ հաշուետուութիւն մը ընել ինքզինքիդ հարց տալով՝ «նպատակիս հասա՞յ»: Որ-



Թուարանութեան գրառումը շատ լաւ էր...  
... Ես ալ շատ աղուոր դիմանկար մը գծեցի:

պէսզի չմոռնաս, թէ այդ նպատակներդ ի՞նչ էին, կրնաս զանոնք արձանագրել տետրակի մը վրայ: ամէն անգամ, երբ որոշում մը կատարեալ ձեւով կը յաջողիս իրագործել, աստղ մը փակցուր... Բազմապատկուող աստղերը սկիզբը քեզ պիտի քաջալերեն: Այս նոյնիսկ պիտի չմտածես զանոնք փակցնելու մասին, որովհետեւ այդ աշխատելու ձեւը քնական դարձած պիտի ըլլայ:

**ԻՆՉՊԵՍ ԱՇԽԱՏԻՆՔ**  
Սակայն դասերուն երկար ժամանակ տրամադրելը յաջողութեան ապահով նշան մը չէ: Նախընտրելի է արդիւնաւէտ մէկ ժամ տրամադրել այդ աշխատանքին, քան՝ նոյն խնդիրն շուրջ երկու ժամ դառնալ: Հետեւաբար, ի՞նչպէս աշխատիլ:

- Աշխատելու ամէնէն լաւ ժամանակը դպրոցէ վերադարձին է, ճաշէն ետք եւ գիշերուան ընթրիքէն առաջ: Ժամը 8:00էն ետք կրնաս շատ գործօն ըլլալ:

- Եթէ պատահին օրեր, երբ ոչ մէկ պարտականութիւն կ'ունենաս, այդ ժամանակը օգտագործէ կարգալու համար:

## ԳԻՏԵԻՐ, ԹԷ...

● Ըստ մասնագէտներուն, Ափրիկէի փրկուողները թիւը շատ բարձր է, մինչ Ասիոյ մէջ անոնք սկսած են կորսուիլ: Ասիոյ մէջ թէ՛ էգ եւ թէ՛ արու փրկուող փողոկերայ ժանիքներ ունին, հետեւաբար զանոնք աւելի կ'որսան:

● Իր 3 հազար երկնաքերներով Չինաստանի ամէնէն մեծ քաղաքը՝ Շանհայ, ամէն տարի գետնին մէջ կը մխրճուի 1,2 - 1,5 սմ.:

● Անգլիոյ մայրաքաղաք Լոնտոնի մէջ գտնուած հոռոմէական հին քաղաքին հնագիտական պեղումներուն ընթացքին գիտնականները տարօրինակ տուեալ մը գտած են: Ան կ'ընդհատէ, երկաթէ պատրաստուած, եւ անոր մէջ պահուած է 2 հազար տարեկան օծանելիք մը: Մասնագէտները զայն կը քննեն գիտնալու համար, թէ ան դիմադարձարու մի համար գործածուած նիւթ մըն էր կամ դարմանումի յատուկ իւր մը, որ կը գործածուէր կարգ մը կրօնական ծէսերու ընթացքին:

● Վստահ որ ծանօթ ես քարաօքիին: Այս երգերով ժամանցը շատ մեծ յաջողութիւն կը գտնէ Ասիոյ եւ յատկապէս՝ Ճապոնի մէջ: Սակայն առաջին անգամ ըլլալով Ֆինլանտայի մէջ այս ամուսն կազմակերպուած քարաօքիի աշխարհի առաջին արտադրութեան առաջնութիւնը առին... անգլիացիները: Մրցումին կը մասնակցէին 7 երկիրներէ եկած 70 երգիչներ:

● Մեքսիկացիները պիտի փորձեն կազմել աշխարհի ամէնէն մեծ փաղը: Անոնք պիտի փորձեն վերակազմել Տուրուսկո շրջանի գրօսաշրջական նկարներ՝ կազմուած մէկ միլիոն կտորներէ: Այս հսկայական պատկերը պիտի կազմուի չորրորդ գետի մը վրայ եւ պիտի ծածկէ մօտաւորապէս 40 հազար քառ. մետր, այսինքն՝ ֆուտպոլի չորս դաշտերու տարածքին հաւասար շրջան մը: Այս արկածախնդրութիւնը պիտի տեւէ չորս ամիս եւ սկզբունքով վերջ պիտի գտնէ նոյնքանի աւարտին:

● Ճորտան քաղաքէն իտալացի մը յղացած է իւրաքանչեւ գաղափար մը՝ ուսելիքներու համ ունեցող մարմին խնամքի նիւթեր: Շատ մեծ յաջողութիւն կը գտնէ յատկապէս իր փրկուողի հոտով լողանքի հեղուկ օճառը: Մինչ պատկերներ կը նախընտրեն տուրմի, քրեմի կամ ծամոնի հոտով նիւթեր:

## ԲԱԿԻՏՈՒԹԻՒՆ

### ԵՐԲ ՕԴԸ 37 ԱՍՏԻՃԱՆ Է, ԵՍ ՇԱՏ ԿԸ ՏԱՔՆԱՄ...

... Սակայն ո՞չ, երբ բաղնիքիս ջուրը 37 աստիճան է: Ի՞նչն է:

Երբ ջերմաստիճանը կը հասնի 37ի, ասիկա շուրջին օրին տաքութեան աստիճանն է: Արեւուն տակ օդը շատ աւելի տաք կ'ըլլայ: Այս ձեւով նոյն ջերմաստիճանով, մարմինդ աւելի կը զովանայ օդին, քան ջուրին մէջ: Ան կը պայթարի տաքութեան բարձրութեան դէմ՝ քրտինքին շնորհիւ: Երբ մենք կը քրտինքը, քրտինքը կը շոգիանայ, եւ ասիկա մեզի կը հայթայթէ զովութեան զգացում մը: Սակայն լողարանին ջուրին մէջ մենք չենք կրնար քրտինք: Հետեւաբար մենք ջուրին մէջ աւելի տաք կը զգանք:

## ԽՈՐԱԳԻՐ

### ԽՈՉԱՊՈՒԽՏՈՎ ՔՐՈՒԱՍԱՆ




Վերամուտը առիթ մըն է վերստին տեսնելու ընկերներ, զորս ամբողջ ամառը չէինք տեսած: Այս առիթով կրնանք կազմակերպել պատկէ հաւաքում մը՝ խօսելու համար ձեր արձակուրդին մասին, փոխանակելու համար յիշատակներ...  
Այս առիթով կրնաս պատրաստել այս խոզապուխտով քրուասանները եւ ընկերներդ հիւրասիրել:

Պէտք ունիս (4 հոգիի համար)  
Տուփ մը փաթ ֆեօլթէի, 4 ապուրի դգալ քրեմ ֆրեշի, 4 ապուրի դգալ կրեմլը պանիրի տաշուքի, 2 կտոր խոզապուխտի, պտղունց մը մշկընկոյզի տաշուքի, աղի, պղպեղի:

- 1) խոզի գլանով մը փաթ ֆեօլթէ խմորը բաց եւ չափահասէ մը խնդրէ, որ դանակով մը խմորի չորս պատկէ եռանկիւններ կտրէ: Խոզապուխտի կտորները երկուքի կտրէ:
- 2) խոբունկ ամանի մը մէջ իրարու հետ խառնէ քրեմը, պանիրը, մշկընկոյզը, աղը եւ պղպեղը:
- 3) Իւրաքանչիւր խմորի եռանկիւնին վրայ դիր խոզապուխտի կէս կտոր մը: Խոզապուխտին վրայ քրեմի խմորէն դիր:
- 4) Քրուասանները կ'ընդ փաթթէ: Չանոնք դիր փուռի յատուկ ափսէին վրայ եւ զանոնք եփէ փուռին մէջ (թերմոսթա 6 - 200 աստիճան տաքութիւն) մօտաւորապէս՝ 12 վայրկեան:



## Ժ Ա Մ Ա Ն Յ



Կրնա՞ս այս կախարհուն օգնել՝ իր բիւրեղեայ գնդակին հասնելու համար: Ա՞ն պէտք է հետեւի 9ի տախտակին պատկանող բիւրեղուն:



Կրնա՞ս գտնել երկու պատկերներուն միջեւ գոյուքիւն ունեցող 8 տարբերութիւնները:



Կրնա՞ս ընդօրինակել գծագրութիւնները՝ հետեւելով քառակուսիներուն:

## Պատրաստե՛ք՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

- «ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»  
ԺԱՄԱՆՅՈՒ ԼՈՒՅՈՒՄՆԵՐ
- 2) Բ - Դ - Գ - Զ - Ա - Բ:
  - 3) 11 շապիկ:
  - 4) Գորիկոնական շարքեր՝  
ա - 5,4  
բ - 2  
գ - 1,2  
դ - 2,1  
ե - 2

## ՆԱԽԱՊԱՏՈՒԹԻՒՆ

### Ո՞Վ ԵՂԱԾ Է ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԸ

Մեզի ծանօթ մեր ամէնէն հին նախահայրը 7 միլիոն տարեկան Թուման է, որ գտնուեցաւ Չատի մէջ, Յուլիս 2001ին: Ան զահրկէց ըրաւ նշանաւոր Լիւսին (3 միլիոն տարի): Սակայն մենք տակաւին չենք կրնար խօսիլ իր մասին՝ իր բեւ մարդ արարած: Մեր տեսակին՝ հիմօ սափիւններու մեզի ծանօթ ամէնէն հին գանկերը 160 հազար տարեկան են: Անոնք այս տարի գտնուեցան Եթովպիոյ մէջ:

## ՎԵՐԱՄՈՒՏ

**HRAYRO  
DRAWING  
ART CENTER**

### ՅԱՅՏՆԱԲԵՐԷ ՉԱԿԻԴ ՊԱՀՈՒԱԾ ՉԻՐՔԸ

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ  
ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ՝  
ԱՆԹԻԼԻԱՍ,  
ՄՉՀԵՐԻ ՇՐՉԱՆ  
ՀԵՌ. 03-944686

ԳՍԱԳՐՈՒԹԵԱՆ  
ՀԱՄԱՆՈՒՄ

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

Համազգային «Վահե Սերբան» տպարանը կարիքը ունի պաշտոնեաներու: Ներկայացնալ անձանք կամ հեռաձայնել 01-241263/4 քիւերուն:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԱՐԲԱՆԱՍ ԶԵՅՆԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 19 Հոկտեմբեր 2003, Նոր Մարաշի Սրբոց Զատասնից Մանկանց եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՀՄԱՅԵԱԿ ՉՊԼԱԶԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 19 Հոկտեմբեր 2003, Նոր Մարաշի Սրբոց Զատասնից Մանկանց եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՒԵՏԻՍ Վ. ԶԷՇԻՇԵԱՆԻ (մահացած Փարիզ) մահուան քառասունըին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 19 Հոկտեմբեր 2003, Զալքայի Հայ Կաթողիկէ Ս. Խաչ եկեղեցոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00ից:

ՄԻՀՐԱՆ ՊԱԼԸԳԶԵԱՆԻ մահուան քառասունըին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 19 Հոկտեմբեր 2003, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՊԵՏՐՈՍ ՕՍՄԱՆԵԱՆԻ մահուան քառասունըին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 19 Հոկտեմբեր 2003, Պուրճ Համուտի Հայ Կաթողիկէ Ս. Փրկիչ եկեղեցոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00ից:

ԱՆԱՀԻՏ ԵՐԱՄԵԱՆԻ մահուան քառասունըին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 19 Հոկտեմբեր 2003, Էշրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՄԱՐԻԱՄ ԳՈՒՅՈՒՄՅԵԱՆԻ մահուան քառասունըին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 19 Հոկտեմբեր 2003, Էշրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԵՐԻՅՈՒԷՒ ԹԱԳՈՒԷՒ ԿՈՍՏԱՆԵԱՆԻ մահուան Զ. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 19 Հոկտեմբեր 2003, Նոր Մարաշի Սրբոց Զատասնից Մանկանց եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

Table with 11 columns and 11 rows for a crossword puzzle. The header row contains numbers 1-11. The grid contains black squares and empty cells for letters.

- 1. Յորձանք - Սուրբիոյ քաղաքներէն:
2. Ս. Գրային ողբերգակ մարգարէ - Արական անուն:
3. Այբուբենէն - Ամբողջ:
4. Երաժշտական չափ - Մակոյի:
5. Աստուած - Չայնանի:
6. Պահպանակ, յուսուելի - Հետք:
7. Փուշ:
8. Տիգ, արիւնածոծ միջատ:
9. Յուցական դերանուն - Շաղկապ - Ստացական ածական:
10. Թքական գաղտնի գործակալութիւն - Փարիզեան պանդոկ - Նաեւ:
11. Կացին - Ռուպի տիկ:

ԹԻՒ 5568
ԽԱԶԲԱՌԻՆ
ԼՈՒԾՈՒՄԸ
Table with 11 columns and 11 rows containing numbers and letters for a puzzle.

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՀԻՄՆԱՐԿ
(Գործակցութեամբ եւ հովանաւորութեամբ Երեւանի Պետական Համալսարանի)

Համագործակցութեամբ՝ Ազգ. Առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդին

ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒԻ ԽՏԱՅԵԱԼ ԴԱՍԸՆԹԱՅՔ

Հայերէնի բարելաւման անվճար ձեռնարկ՝ պատանդներու, երիտասարդներու, մայրենիով դասաւանդող ուսուցիչներու եւ հայկական հաստատութիւններու պաշտօնեաներուն համար

90 ժամեայ դասաւանդութիւն՝ 4 Նոյեմբեր 2003 - 13 Յունիս 2004

Դասաւանդութեան օրեր՝ ամէն Երեքշաբթի եւ Հինգշաբթի, երեկոյեան ժամը 5:00 - 6:30, Մ. եւ Հ. Արսլանեան ճեմարան, Մրգիէր:

Դասընթացի աւարտին՝ համապատասխան վկայագիր

Մանրամասնութեանց համար հեռաձայնել 04 - 712603, 04 - 712604, 03 - 429685 քիւերուն

«ԱԶԳԱԿ»Ի ՄԵՁ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, Միւշեհ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 5:00: ՄԱՀԱԶԳԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահազգ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան առեւ որ գայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

ԽՈՑ (21 Մարտէն 20 Ապրիլ)
Ընտանեկան ճաշկերոյթի մը առիթով լաւ կ'ընէիք, երբ հրատարակուեց Ձեր գրքի մասին, որպէսզի անոնք չըզայնացան Ձեր գրքի մասին: Միւշեհ ու ժամանակ ձեր շատախօսութեամբ մի ծանօթացնէր զանոնք:

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)
Նախատեսուած են հանդիպումներ օտարներու հետ, որոնց դիմաց պիտի չկարենաք դրսեւորել ձեր ձիրքերը: Պարզապէս փափաք չունիք նման մթնոլորտի մը մէջ երկար մնալու հիշք բախելու:

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)
Երբ հաւարածույ կազմող էք, այսօր պիտի երթաք լիք շատ զրամ ծախսելու փորձութեամբ: Ուրեմն դուք ձեզ «սանահազգեցելու» աստիճան մի՛ ծախսէք:

ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)
Առանձին չէք պարիք, ո՛չ ալ մեկուսացած կզգիի մը մէջ կը գտնուիք: Ուրեմն նկատուի առեւ ճաշ տեսակէտներ ձեզի հետ ապրող անձներուն, որպէսզի օրը ընթանայ սիրով:

ԱՌԻԻԾ (24 Յունիսէն 23 Օգոստոս)
Այսօր առանձին մի՛ մնաք, որպէսզի մութ միտքերով, յոռտես տրամադրութեամբ չմնաք: Պաշարուած էր մտահոգութիւններով, որոնք պատճառ կը դառնան ձեր խղճարարութիւնը խանգարելու:

ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
Անձ մը, որ ձեզի ծառայութիւն մը ընելու պարտաւոր է, կը ստանայ: Մինչդեռ գործը ստիպողական է: Համարձակութիւնը ունեցէք անոր յիշեցնելու իր գործը եւ զինք յառաջ մղեցէք քիչ մը:

ԿՇԻՌՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
Երբ առեւտրական էք կամ գործի մարդ, այսօր տեսակաւոր գործեր պիտի ունենաք իրագործելու: Չանագրք մը ամէն կատարել զպիտի չիղերով, որպէսզի կարենաք գլուխ հանել ձեր պարտականութիւնները:

ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
Ճամբորդութեան մը ընթացքին պիտի հանդիպիք կարգ մը շրջանացող երեւոյթներու, որոնց դիմաց պիտի մնաք ծիծաղուող տրամադրութեամբ: Պիտի կատարուի դուրս գալ տղաութեան անոնց հիւսիսական կամ բարոյական վնասի:

ԱՆԵՆԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
Աշխատանքները յառաջ մղելու ընթացքին պիտի ստիպուիք ձայն բարձրացնելու: Բայց ասիկա լաւագոյն միջոցը չէ նման գործերու պարագային: Պէտք չունիք ողբերգութիւն մը ստեղծելու ոչինչ խնդրի մը համար:

ԱՅՄԵՆԱԿՆԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
Միտքի մը կողքին դուք ձեզ լաւ գգալու համար, հարկ է, որ ձեր ճշտակը հաշտեցնէք իր ճշտակին եւ ըմբռնումներուն: Բայց ասիկա գէշ վերաբերում մըն է, որովհետեւ այս պարագային ձեր անհատականութիւնը կը սուսկէ:

ԾՈՒՎԱԼՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)
Երբ ձեր գաւակները ընտանի անասուն մը պահանջեն ձեզմէ կամ այլ կարգի անտեղի պահանջ մը ներկայացնեն, մի՛ անպատեք անոնց փափաքը կատարելու: Այս մասին իրենց հետ խօսեցէք անուշուրեմեամբ:


ՉՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)
Բազմաթիւ միջադէպեր պիտի արգիլեն ձեզի կատարելու ձեր որոշած գործերը: Ի տես այս յետաձգութեան ձեր գաւակները շատ պիտի տրտմին: Ձեւ մը գտէք ճոր խոստումներով զանոնք համոզելու եւ միտքաբերելու:

ՕՐԱՏԵՏՐ

ԵՐԳԱՀԱՆԴԵՄ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՄ / ՓԱՌԱՏՈՂ ՄԻՇԷԼ ՏԵԼՓԷՇ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՁ

Իր ժողովրդային երգերով մեծ հռչակ վայելող ֆրանսացի երգիչ Միշէլ Տելփէշ այսօր պիտի ունենայ յիբանանեան էլոյթ մը, որ տեղի պիտի ունենայ երեկոյեան ժամը 9:00ին, «Պիէլ»ի մէջ:

Քանի մը տասնամեակէ ի վեր ֆրանսական երգարուեստի աստղերէն մէկը հրապարակի վրայ մնացող Միշէլ Տելփէշ իր երաժշտական ասպարէզը սկսած է 1960ական թուականներու կիսուն եւ ունեցած՝ շատ արագ յաջողութիւն: Անոր երաժշտական կեանքին անկիւնաքարը կը հանդիսանայ «Շէ Լիբէթ» ժայնապնակը, որուն գտած մեծ յաջողութիւնը զինք անմիջապէս կը վերածէ պանդուխտներու համակարանը վայելող երգիչի: Համանուն երգը մինչեւ այսօր մաս կը կազմէ անոր ցանկին: Ֆրանսայի մէջ երգիչին գտած յաջողութիւններուն կը յաջորդեն միջազգային շրջապատը: Արուեստագէտին



կեանքին 1975 - 1985 հանգրուանը կը յատկանշուի համեմատական անշարժութեամբ: Անոր երգերը թէեւ կ'ունենան որոշ յաջողութիւններ, սակայն զգալիօրէն իրենց տեղը կը զիջին նախկին գործերուն: Սակայն 1985էն ետք Միշէլ Տելփէշ կ'ունենայ գեղարուեստական վերապարթօնը մը եւ կը հրապարակէ բազմաթիւ ժայնապնակներ, որոնք նորնայ կ'արժանանան լայնածաւալ յաջողութեամբ: 1992ին ան դարձեալ կը միանայ իր վաղեմի գործակիցին՝ Ռոլան Ժոնասին, որուն գրութիւններէն կը ծնին բազմաթիւ նոր երգեր: Միշէլ Տելփէշի նշանաւոր երգերէն յիշենք «Ուայթ իւ յուայթ», «Քան ժ'էթէ շանթօր», «Փուր իօն Ֆիլիթ ալէթ թուս», «Լը շանտօր», «Լը յուայթ է շէր» եւ ուրիշներ:

ԱՅՍՈՐ



- Երգահանդէս՝ Միշէլ Տելփէշի էլոյթը, ժամը 21:00ից, «Պիէլ»:
- Գծանկարներու ցուցահանդէս՝ «ՄԵԿԻՔ ՓԵՆԱՐԵ», Պէյրուսի Ամերիկեան համալսարան, մինչեւ 25 Հոկտեմբեր:
- Թատրոն՝ «Պիեթիզար Կոստ», ժամը 20:30ից, Պէյրուս թատրարան, մինչեւ 24 Հոկտեմբեր:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Ֆէյզըզ», Ֆլաւիա Բուստի գործերը, «Էսփաս էս. Տէ.» ցուցասրահ, մինչեւ 18 Հոկտեմբեր:
- Լուսանկարչական ցուցահանդէս՝ «Փալեսթին աւան 1948», Ֆրանսական Մշակութային կեդրոն, մինչեւ 31 Հոկտեմբեր:

ՕՐԵՆՈՒՅՅ




ՇԱՐԱԹ, 18 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2003
ՊԷՅՐՈՒԹ ԱՄՊՈՏ
ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ ՅԵՐԵԿ՝ 26°C
ԳԻՇԵՐ՝ 22°C
ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 71%

ԱԶԳԱԿ 50 ՏԱՐԻՄ ԱՌԱՋ 18 Հոկտեմբեր 1953

ՕՐԸ ՕՐԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ՝ ՈՒԻԼԻԸՄ ՍԱՐՈՑԵԱՆԻ ԴԵՄ

«Սովետական Հայաստան» ամսագրի 1953 Մայիսի թիւին մէջ Դերեւիկ Դեմիրճեան կրակ կը տեղայ մտերիվ հայ գրագէտին՝ Ուիլիըմ Սարոյեանի դէմ: Յօդուածին խորագիրն է «Խօսք ուղղուած գրողին եւ նրա ընթերցողին»: «Վարդանանք»ի ծերունի հեղինակը իր պարտաւարկութիւնը երեք լայն էջերէն երկուրը յատկացուցած է Սարոյեանին: Ընդհանուր տեսութեան մը ետք կը սեցնէ խումբ մը մտերիկացի եւ անզլիացի գրագէտներ, եւ անոնց հետ՝ Սարոյեանը, իրրեւ դասալիքները: Ի՞նչ է անզլիագիր հայ գրագէտին մեղքը: - «Նախ եւ առաջ Սարոյեանին չի կարելի համարել յառաջդիմական կամ ժողովրդավար գրողներից մէկը, որ անցել է կայսերապաշտութեան կողմը: Նա «անցած» չէ. նա «այնտեղ» էր: Նա միայն մի երկու պատմուածքով ցոյց է տուել, որ տեսնում է հայերի ողբերգական վիճակը Ամերիկայում եւ ամերիկեան պրիւկերպի բաղադրութիւններ: Այդ չի թեթեւեցնում նրա վարքա-

# Մ Ա Ր Ջ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Ր Տ



ԱՍԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԲԱԺԱԿ  
ՋՏՈՒՍԻ ՄՐՅԱՇԱՐՔ

## ՅՈՐԴԱՆԱՆ - ԼԻԲԱՆԱՆ՝ 1-0

Ասիոյ ֆուտպոլի բաժանի գտնվող մրցաշարին, երէկ Լիբանանի ֆուտպոլի ազգային խումբը 1-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց Յորդանանի մէջ, դաշտին տէրերէն:

Յորդանանցիք ընդհանուր առմամբ տիրապետեցին առիթ չտալով, որ մրցակիցը վտանգաւոր յարձակումներ կազմակերպէ: Այնպէս կը թուէր, որ Լիբանան հաւասարութեամբ ալ պիտի բաւարարուի, որովհետեւ անոր կողմէ կազմակերպուած յարձակումները շատ երկչուտ էին:

Դաշտին տէրերը իրենց կողմ նշանակեցին մրցումին աւարտէն հինգ վայրկեան առաջ, երբ օրուան քաթարցի իրաւաւորը փենսլթի մը սուղեց:

Դարձի մրցումին, որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ 9 օրերէն, 22 Հոկտեմբերին, Լիբանան անպայման իր դաշտին վրայ պէտք է յաղթանակ արձանագրէ: Նշենք, թէ իր կատարած առաջին մրցումին, Լիբանան 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Հիւսիսային Բորնէն:

Լիբանանի խմբակին (Դ. խմբակ) մաս կը կազմէ նաեւ Իրան: Իւրաքանչիւր խմբակին առաջին երկու դիրքերը գրաւող խումբերը պիտի ապահովեն աւարտական ինչ իրենց տոմսը, որ տեղի պիտի ունենայ Զինաստանի մէջ:

## ՍԿՈՎՏԻԱ ՔԱՅԼ ՄԸ ԱՌԱՋ՝ ՋԷՍՓԻՇՆՋ ԼԻԿԻ ՄԷՋ

Իր գումարած վերջին ժողովին Եու. Է. Էֆ. Ա.Ն յայտնեց, թէ 2004-2005 եղանակէն սկսեալ Սկովտիոյ ախոյեան հանրիսացած խումբը ուղղակի պիտի ապահովէ «Ջէմփիլըն» Լիկայի ֆուտպոլի մրցաշարին իր տոմսը, առայց վտուծի մրցումներուն իր մասնակցութիւնը բերելու: Այսպիսով, Սկովտիա Թուրքիայէն իլեց այդ դիրքը, նկատի ունենալով որ նախապէս այդ մէկը յատկացուած էր Թուրքիոյ ախոյեանին:

Սպանիա, Իտալիա եւ Անգլիա երկուքական խումբ պիտի ունենան խմբակներու այդ հանգրուանին, իսկ երկուքական խումբ՝ վտուծի Գ. հանգրուանի մրցումներուն:

Գերմանիա, Ֆրանսա եւ Յունաստան պիտի ունենան երկուքական խումբ, իսկ յաւելեալ մէկական խումբ՝ վտուծի Գ. հանգրուանի մրցումներուն:

Եու. Է. Էֆ. Ա.Ն այս դրութիւնը կը կիրարկէ, նկատի ունենալով իւրաքանչիւր երկրի վերջին հինգ տարիներուն արձանագրած արդիւնքը եւ որուն հիմամբ անոնց դասաւորումը կը ձևի:

Նշենք, թէ Սպանիա, Իտալիա եւ Անգլիա Եու. Է. Էֆ. Ա.Ն կողմէ հրապարակուած ընդհանուր դասաւորման մէջ կը գրաւեն առաջին երեք դիրքերը:

Ստորեւ՝ Եու. Է. Էֆ. Ա.Ն կողմէ հրապարակուած դասաւորումը եւ իւրաքանչիւր երկրի խումբերուն սահմանուած տեղերը.

Խմբակներու դրութիւն	Զտուծի Գ. հանգրուան	Զտուծի Բ. հանգրուան	
1.- Սպանիա	2	2	0
2.- Իտալիա	2	2	0
3.- Անգլիա	2	2	0
4.- Գերմանիա	2	1	0
5.- Ֆրանսա	2	1	0
6.- Յունաստան	2	1	0
7.- Փորթուգալ	1	1	0
8.- Հոլանտա	1	1	0
9.- Սկովտիա	1	1	0
10.- Թուրքիա	0	1	1
11.- Պելճիքա	0	1	1
12.- Չեխիա	0	1	1
13.- Չեխիա	0	1	1
14.- Ուրուգուայ	0	1	1
15.- Իսրայէլ	0	1	1
16.- Աւստրիա	0	1	1
17.- Լեհաստան	0	1	1
18.- Ռուսիա	0	1	1
19.- Սերպիա	0	1	1
20.- Նորվեգիա	0	1	1
21.- Պուլկարիա	0	1	1
22.- Խրուսիա	0	1	1
23.- Շուէտ	0	1	1
24.- Դանիա	0	1	1
25.- Սլովակիա	0	1	1

**Հ.Մ.Ը.Մ. ԱՆԹԻԼԻԱՍ ՄԱՍՆԱՃԻՂ**  
**KUNG FU ԴԱՍԸՆԹԱՅԸ**

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի մասնաճիւղը, հաճուքը ունի յայտարարելու, թէ սկսած է KUNG FU դասընթացներու, մասնաւորաբար պատանիներու համար:

Մարզումները տեղի կ'ունենան Զաբաթ օրերը, ժամը 2:00էն սկսեալ, Աղբալեան - Հ.Մ.Ը.Մ. մարզադաշտային համալիրին մէջ:

Մասնակցի փափաքողները կրնան հեռաձայնել հետեւեալ թիւերուն. 04 - 722903 եւ 03 - 384020, կամ անձամբ ներկայանալ համալիր, Զաբաթ օրերը, կէսօրէ ետք ժամը 1:30էն սկսեալ:

## ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

## ՍՈՐԱՉՊՈՒՐԿ - ՄԱՐՍԵՅ՝ 4-1

Երէկ, Ֆրանսայի ֆուտպոլի ախոյեանութեան 10րդ հանգրուանի բացման մրցումը՝ Սթրասպուրկ - Մարսէյ վերջ գտաւ 4-1, ի նպաստ Սթրասպուրկի:

Մնացեալ բոլոր մրցումներն ալ տեղի պիտի ունենան այսօր՝ Ծաբաթ:

Ի շնորհիւ պետական կազմը՝ Մոնաքո, իր դաշտին վրայ կարեւոր մրցում մը ունի կատարելիք, երբ հիւրընկալէ Օքսէնը:

## ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.Ի ՄՐՅԱՇԱՐՔԻ Բ. ՀԱՆԳՐՈՒՄՆԻ ՎԻՃԱԿԱԶԳՈՒԹԻՒՆ

Մարտի	Մրցակից	Ժամ
Մոնաքո - Օքսէն	18:15	
Մէս - Նանթ	21:00	
Պարսո - Թուլուզ	21:00	
Մոնփելիէ - Կէնկան	21:00	
Ռեյմս - Նիս	21:00	
Փարիզ Մէն ժերմէն - Լը Մանս	21:00	
Լիլ - Ամպրիս	21:00	
Լիոն - Սոչո	21:00	
Պարիզ - Լանս	21:00	

Մարտի	Մրցակից	Ժամ
Մանչեսթըր Սիթի (Անգլիա) - Կորնվիկ (Լեհաստան)	Պարսելոնա (Սպանիա) - Փանիոնիոս (Յունաստան)	Պենֆիլթ (Փորթուգալ) - Մոլտը (Նորվեգիա)
Սլաւիա Փրակա (Չեխիա) - Լեւաթի Սոֆիա (Պուլկարիա)	Ռոզենպորկ (Նորվեգիա) - «Վարմիլ Աստուրի» Պելկրտ (Սերպիա)	Վալենսիա (Սպանիա) - Մաքսիլ Հայֆա (Իսրայէլ)
Սպարտակ Մոսկուա (Ռուսիա) - Տիբասո Պուրբէ (Ռումանիա)	Կազիմ Քեփուֆուր (Ռուրբիա) - Լանս (Ֆրանսա)	Պրոնտպի (Դանիա) - Շալթե (Գերմանիա)
Արիս Սալոնիք (Յունաստան) - Փերուեիա (Իտալիա)	Իւրբիթ (Հոլանտա) - Կազիմ Քեփուֆուր (Ռուրբիա) - Լանս (Ֆրանսա)	Պրոնտպի (Դանիա) - Շալթե (Գերմանիա)
Արիս Սալոնիք (Յունաստան) - Փերուեիա (Իտալիա)	Իւրբիթ (Հոլանտա) - Կազիմ Քեփուֆուր (Ռումանիա)	Սպարտակ Մոսկուա (Ռուսիա) - Տիբասո Պուրբէ (Ռումանիա)

**Հ.Մ.Ը.Մ. ԱՆԹԻԼԻԱՍ**  
**2003 - 2004**  
**ՄԱՐԶԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԸ**

սկսած է հետեւեալ ժամանակացոյցով.  
Ճատրակ. Ուրբաթ ժամը 6:00էն 8:00  
Kung Fu. Զաբաթ ժամը 2:00էն սկսեալ  
Football. Ուրբաթ ժամը 5:30էն 7:00  
Կիրակի ժամը 11:30էն 1:00

Basketh դպրոց. տղաք/աղջիկ  
1984 - 1985ի ծնունդ  
1986 - 1987ի ծնունդ  
1988 - 1989ի ծնունդ  
1990 - 1991ի ծնունդ  
1992 - 1993ի ծնունդ  
1994 - 1995ի ծնունդ  
1996 - 1997ի ծնունդ

Մամրածմանը համար դիմել Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ. մարզադաշտային համալիր, Երկուշաբթի եւ Գորեքաբթի օրերը երեկոյան ժամը 8:00էն 10:00:

**ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

**ՓՕԼԻԿԼՈՒԹ ԲՈԼԷՃԻ**  
**EMPLOYMENT DEPARTMENT**  
ձեռնարկած է լայն արշալի մը՝  
**«ՈՉ ՄԷԿ ԱՆԳՈՐԾ ԵՐՋԱՆԱԻԱՐՏ»**  
կարգախօսով:

Կապ հաստատուած է գործի ապահովման մեծ ընկերութիւններու եւ ուղղակի գործատէրերուն հետ:

**ԾԱՆՕԹ. - Կը խնդրուի դիմել միայն ՓՕԼԻԿԼՈՒԹԻ**  
**շրջանաւարտներն ու աշակերտները՝ առատուեան ժամը**  
**8:30էն կ.ե. ժամը 6:30:**

**EMPLOYMENT DEPARTMENT**  
**POLYGLOT COLLEGE: Dora, Tel: 01251320**

## ՃԱՐՏԱԿ. ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱԺԱԿ

## Հ.Մ.Ը.Մ. ԱՆԹԻԼԻԱՍ

## ՄՐՅԱՆԱԳՐԵՑ ՅԱՂԹԱՆԱԿ ՄԸ ԵՒ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ՄԸ

Լիբանանի ակումբներու բաժանի մրցումներուն ծիրէն ներս, Զորեքշաբթի, 15 Հոկտեմբերին Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի կազմը 4,5 - 1,5 արդիւնքով պարտութեան մատնեց Հ. Կ. Մ.ը եւ հասաւ քառօրը աւարտական հանգրուան: Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի յաղթանակները ապահովեցին Ռաֆֆի ձիկերեան, Բնարիկ Սուրբատեան, Խաչիկ Մուրատեան եւ Գէորգ Կոստանեան, մինչ տղք՝ Գէորգ Թերզեան հաւասարութիւն մը արձանագրեց եւ Սերժ Յովնանեան՝ պարտութիւն մը:

Քառօրը աւարտականի մրցումներուն, որոնք տեղի ունեցան Հինգշաբթի օր Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս 4-2 արդիւնքով պարտութիւն մը կրեց 3 անգամ Լիբանանի ախոյեան Ֆրէնկերու ակումբէն, որուն կազմը կ'ընդգրկէ օտար վարպետներ, ինչպէս՝ աշխարհահռչակ մեծ վարպետ Եւգենի Էրմենչով:

Հ.Մ.Ը.Մ.ի կազմին յաղթանակներ արձանագրեցին միայն Խաչիկ եւ Սիւզան Սուրբատեանները:

Նշենք, որ նախապէս տեւաբար Լիբանանի ախոյեանութեան պարագլուխ դիրքերը գրաւող Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի կազմը վերջին երեք տարիներուն չէ կրցած այդ մէկը ընել, արուած ըլլալով որ այլ խումբեր (Ռիատի, Անար, Քէր) իրենց կազմերը օտած են օտար մարզիկներով, մրցակցութեան դուրս ձգելով բոլոր մնացեալ խումբերը:

## ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Շարունակուած 3րդ էջէն

## ՍՈՒՐԻՈՅ ԴԵՍ ՊԱՏՄԱՍԻՋՈՅՆԵՐ ՎԱՍՏԱՆԵՆՈՒ ՕՐԻՆԱԳԻԹԻ ՎԱԵՐԱՑՈՒՄ

«Մաֆի» գրած է, թէ նախագահ Ասատ կը յարձակի ժայռայեղականներուն եւ Ուաշինկթընի մէջ պատերազմի մէջ պարակցողներուն վրայ:

Թերթը նշած է, թէ արաբական աշխարհն ու Լիբանան քննադատեցին Միացեալ Նահանգներու երկուքայեցողիչներու Տան կողմէ Սուրիոյ դէմ պատժամիջոցներու հաստատումը պահանջող օրինագիծի վաւերացումը, իսկ Իսրայէլը դրուատեց ցանկը:

Ըստ «Տար»-ի, Իսրայէլը որպէս Սուրիան պատժելու օրինագիծին համար, իսկ Միացեալ Նահանգները կը յայտնէ, թէ նախագահ Ասատ նշեց, որ ժայռայեղականներ օգտագործեցին 11 Սեպտեմբերի դէպքերը եւ սկզբունքները ոտնակոխեցին, երկխօսութեան փոխարէն՝ բռնութիւն գործածելով, արդարութեան փոխարէն՝ անարդարութիւն, իսկ ներքին անկայեղութիւնները ստեղծեցին:

Թերթին համաձայն, Սուրիայի բանակի եւ պիւնյալ զորքերու հրամանատար զօր. Հասան Թուրքմանի սուրիական զինուորները հրապարակեցին միջոցառումները վիճակի մէջ գտնուելու, որպէսզի անհրաժեշտութեան պարագային հակապիտան անհրաժեշտութեան յարայեղական յարձակումներուն:

«Մաֆի» դիտել տուած է, թէ Ուաշինկթըն կը բացառէ նախագահական վերջին Սուրիոյ հարցով եւ Սուրիան մեկուսացուելու կամ կեցուածքը փոխելու երկուքայեղական դիմաց կը դնէ:

«Բիֆա Սրապի» գրած է, թէ նախագահ Ասատ իր խօսքին մէջ յայտարարեց, թէ ամերիկեան կառավարութեան մէջ գտնուող ժայռայեղականներու նպատակները վատ են:

Ըստ թերթին, Սուրիա կը յայտարարէ, թէ անոնուած որոշումը ոչ մէկ փոփոխութիւն պիտի բերէ մեր քաղաքականութեան մէջ: Սուրիա իր բանակն ու ուժերը արտակարգ դրութեան մէջ կը պահէ, որպէսզի հարկ եղած ատեն կարենայ պատասխանել իսրայէլեան յարձակումներուն:


«Մաֆի» դիտել տուած է, թէ նախագահներուն միջեւ եղած անհամաձայնութիւնը կը սրի, իսկ պետական պիւնյալներու յարաբերութեան մեղքը կը սեւանայ:

«Սուր»-ի համաձայն, իսրայէլ հետացած իշխանապետերը կը միանան արաբական վաճառքի հարցով: Վարչապետ Հարիրի իր այցելութիւններուն շրջագիծը կ'ընդարձակէ՝ իրենց անցիկներու ապրուստի եւ այլ հոգեբան հեռու մնալու համար:

«Նահար» դիտել տուած է, թէ նախագահներուն միջեւ եղած անհամաձայնութիւնը կը սրի, իսկ պետական պիւնյալներու յարաբերութեան մեղքը կը սեւանայ:

### ՇԱՐՈՆ ԴԻՇԴ ԶԻ ՆԿԱՏԵՐ ԱՐԱՖԱԹԻ ԱՐՏԱՔՍՈՒՄԸ

Մինչ պաղեստինեան իշխանութեան ղեկավար Եսաթ Արաֆատի վրայ ճնշումները թափ կը ստանան՝ ամերիկացի դիւանագէտներու դէմ յարձակումէն ետք, «Ճերուզալէմ Փոսթ» օրաթերթը երէկ յայտնած է, որ վարչապետ Արիէլ Շարոն կ'ընդդիմանայ անոր արտաքսումին: Շարոն թերթին ըսած է. «Ըստ տարիներու մեր հաշիւներուն, զայն արտաքսելը Իսրայէլի համար լաւ պիտի չըլլայ»:



«Նաեւ անոր առանց վնաս հասցնելու զայն արտաքսելու հաւանականութիւնը փոքր է, ո՛չ միայն անոր ապահովութեան հակող պահակներուն պատճառով, այլև որովհետեւ ան Իսրայէլացիներէ բաղկացած մարդկային շղթայով մը պաշարուած պիտի ըլլայ», ըսած է վարչապետը:

Շարոն շեշտած է, որ կը շարունակէ Արաֆատի շրջանին մէջ խաղաղութեան դէմ ցցուող գլխաւոր խոչընդոտընդակոծելու զայն արտաքսելու սկզբունքին դէմ չէ:

Թերթը յայտնած է, որ հարցազրոյցը տեղի ունեցած է կիրակի օր, ամերիկացի դիւանագէտներու դէմ պաղեստինեան յարձակումէն առաջ:

Շարոնի գրասենեակին բարձրաստիճան մէկ պաշտօնատարր պնդած է, որ Շարոնի արտաքսութեան թիւերը կ'ընդգրկեն փոփոխութիւն չեն նշանակեր, այլ, թէ՛ «ներկայ պայմանները յարմար չեն Արաֆատի արտաքսումին»:

Պաղեստինցի նախարար Սաէպ Ռաբթաթի նոյնպէս ըսած է, որ Իսրայէլ չէ ջնջած Արաֆատը տեղափոխելու կամ նորնիսկ անոր ֆիզիքապէս վնաս հասցնելու իր սպառ-

նալիքը: «Անկա յարմար ժամանակի կը սպասէ», աւելցուցած է ան: Ամերիկացի դիւանագէտներու սպանութեանէն ետք կազայի մէջ Հինգ-շաբթի օր տեղի ունեցած էին շարք մը ձեռնարկութիւններ, որոնց պատճառով բախումներ արձանագրուած են պաղեստինեան ապահովութեան ուժերուն եւ ժողովրդային Դիմադրութեան Յանձնախումբին անդամներուն միջեւ: Այս վերջին կազմակերպութիւնը կը թուէր յարձակումին գծով քննութեանց առանցքը ըլլալ:

Էֆ. Պի. Այ-ի մէկ խմբակը, որ Հինգշաբթի օր Իսրայէլ ժամանած էր, երէկ տեսակցութիւն մը ունեցած է պաղեստինեան հետաքննութեանց յանձնախումբին հետ, որ կազմուած է դիւանագէտներուն դէմ յարձակումէն ետք:

Հանդիպումը տեղի ունեցած է Իսրայէլի եւ կազայի միջեւ էրէզի անցքին վրայ:

Արաֆատ, որ դատարարած է յարձակումը, Հինգշաբթի օր յայտնած է, թէ պաղեստինցի քննիչներ պիտի գործակցին Էֆ. Պի. Այ-ի գործակալներուն հետ:

### Ե. ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶՊՈՒՇԱՅՆԷ

Միւս կողմէ, Եւրոպական Միութեան ղեկավարները երէկ զգուշացուցած են, որ Այսրայրդանանի մէջ Իսրայէլի կողմէ «ապահովութեան» պատնէշի մը կառուցումը կրնայ անկարելի դարձնել խաղաղութեան հաստատման համաձայնութեան մը ապահովումը:

Անկա նաեւ երկու կողմերը ամբաստանած է իրենց տազնապին վերջ տարու համար բաւարար քայլերու դիմած չըլլալու յանցանքով:

Իսրայէլի ուղղուած խիստ զգուշացումին կողքին, Ե. Միութեան ղեկավարները շեշտած են, որ պաղեստինեան իշխանութիւնը պէտք է վերջ տայ հակաիսրայէլեան յարձակումներուն, ինչպէս նաեւ անոնքիստիւ դատապարտած են ամերիկացի դիւանագէտներուն կարաւանին ակնահարուածը:

Ղեկավարները Պրիւքսէլի մէջ իրենց երկօրեայ վեհաժողովին փակումը կատարած են զգուշացնելով, որ Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացը անհախընթաց անելի մը կը դիմագրաւէ:

## ԹԵ՛ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ, ԹԵ՛ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԵՏՆԻ ԿՐԱՅ ՏԻՐԱՊԵՏՈՂԸ ՏԱԿՆՈՒԿՐԱՅՈՒԹԻՒՆՆ Է

Մ. Նահանգներու նախագահ Ճորձ Գուշի Մայիս 1ի այն յայտարարութենէն ի վեր, թէ Իրաքի մէջ բախումները վերջ գտած են, ամերիկացի 101 զինուոր սպանուած է բախումներու եւ յարձակումներու ընթացքին եւ աւելի քան 650 ուրիշներ վիրաւորուած:

Նորագոյն պոհերը արձանագրուած են երէկ եւ Հինգշաբթիէն Ուրբաթ լուսոցող գիշերը:

Երէկ զինուոր մը սպանուած է եւ երկու ուրիշներ վիրաւորուած Պաղտատի մէջ տեղի ունեցած պայթումի մը պատճառով:

Հինգշաբթի գիշեր, կեդրոնական Քարպայա քաղաքին մէջ ամերիկացի 3 զինուոր եւ իրաքցի 2 ոստիկան սպանուած է, ինչպէս նաեւ ամերիկացի 2 այլ զինուոր վիրաւորուած է երբ անոնք Ապաս մզկիթին մօտակայ շէնքերու տանիքներէն յարձակումի ենթարկուած են:

Ըստ շիի կրօնական Մահմուտ Հասանիի գլխաւորած տեղացի խմբակին մէկ անդամին, ամերիկեան ուժերը քանի մը հոգի սպաննած են յարձակումէն ետք ծայր տուած բախումին ըն-

թացքին: Կեդրոնական Նաթաֆ քաղաքին մօտակայ Քուֆահ քաղաքին մէջ արտասանուած խօսքի մը ընթացքին, շիի կղերական Մոքթատա Սատր երէկ Մ. Նահանգները եւ յարձակումները անբաստանած է Իրաքի շիիներու շարքերուն միջեւ տազնապաններու ստեղծումը կը հրահրեն որպէսզի կարենան զինք ձերբակալել եւ ձախողութեան մատնել իսլամական բնոյթով կառավարութեան մը իր ծրագիրները:

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԵՏՆԻ ԿՐԱՅ

Քաղաքական գետնի վրայ ամերիկեան Ծերակոյտը Հինգշաբթի օր հարուած մը հասցուցած է նախագահ Ճորձ Գուշի եւ Աֆղանիստանի օժանդակութեան առաջարկին, անոր պիտձէին յաւելել 87 միլիարտ տոլարի առաջարկին գծով բարեփոխում մը որդեգրելով եւ պահանջելով, որ Իրաքի վերակառուցման յատկացուելիք 20 միլիարտ տոլար գումարին կէսը փոխատուութեան ձեւ ստանայ:

Որ բարեփոխումին որդեգրումով Ծերակոյտը ուժեղ պատգամ մը յղած է ամերիկեան վարչակարգին. «Անիկա պէտք է յաւելել քայլերու դիմէ ապահովելու համար, որ ամերիկեան ուժերը եւ տուրք վճարող քաղաքացիները առանձին չվերցնեն այս ծանր բեռը»:

### ԵՐՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՂՈՎԻՆ ԿԵՑՈՒՄԵՐԸ

Ե. Միութեան ղեկավարները երէկ Պրիւքսէլի մէջ ասարտեցին իրենց երկօրեայ վեհաժողովը, իշխանութեան փոխանցումին համար «իրապաշտ ժամանակացոյցի մը եւ ՄԱԿի ուժեղ եւ կենսական դերակատարութեան մը» գծով կոչ ուղղելով:

Պահանջը տեղի կ'ունենար ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին կողմէ միաձայնութեամբ որդեգրուելէ ետք Իրաքի ամերիկեան բանաձեւ մը պատերապմին դէմ

դիրքորոշուած Ֆրանսայի, Գերմանիոյ եւ Ռուսիոյ պօրակցութեամբ:

Հակառակ անոնց արտայայտած վերապահութիւններուն, անոնք ի նպաստ Գանաձեւին քուէարկած են:

Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաք Պրիւքսէլի մէջ երէկ արդարացուցած է բանաձեւին պօրավիզ կանգնելու իր որոշումը յայտնելով, որ Փարիզ ուլած է պահպանել միջապային միասնականութիւնը:

Հակառակ վեհաժողովէն բխած հաղորդագրութեան, Ֆրանսայի եւ Գերմանիոյ կատարած յայտարարութիւնները ցուցանիշ են, թէ Իրաքի գծով յարուածութիւնը տակաւին առկայ է: Արդարեւ անոնք կը մերժեն զինուորական օժանդակութեան կամ նիւթական յաւելելու օժանդակութեան խոստում կատարել՝ խոսափելով շարքերուն նուիրատուներու ժողովէն առաջ:

(ԱՅՓ)

ՄԱՍՆԱԿՑԵՑԷՔ  
«ԱԶԴԱԿ»Ի ՄՐՑԱՆՔԻՆ  
ԷՋ 3



# ԱԶԵՆՐՈՂԵԱՆ

Արուեստից Վարժարան







## 2եր

Bourj Hamoud, Arax street, Tel.: 01/260504, Fax: 01/262955

# ամենա Աօտիկ թեֆնիքը գուլէճը

**B.T. 100,000 LP/month \* LCCIEB Business Specializations \* ACCOUNTING 50,000 LP/month \* TICKETING IATA**  
**English & Foreign Languages \* PROFESSIONAL IT TRAINING \* COMPUTER + INTERNET 25,000 LP/month**  
**COMPUTER Hardware \* TV - Video & Radio Repair \* Car Electricity & Electronics \* HAIR STYLING \* MAKE UP**  
**JEWELRY Design \* DIAMOND Setting \* WAX Molding \* GEMOLOGY \* COOKING**